

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԳԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔ ՈՒ ՎԱՐՉԱՊԵՏ

Պատրիարքարանը Կ. Պոլսոյ թերթերուն մէջ յուլիս 1 13ին հրատարակած մէկ զեկայցալը կը տեղեկացնէ թէ պատրիարքը եւ վարչապետը յուլիս 11ին Երւրազի պալատը հրաւիրուելէ յետոյ, միւս օրը Կեղորոնական վարչութեան հաղորդեր են «այն բարեհաճ բարձրագոյն հրահրած մաները զոր Օգոստ. Կայսրը շնորհ ըրած էր տալ առ «կախ խնդրոց անմիջական կարգադրութեանը համար:»

Ինչ ինչ նկատումներ շարժառիթ եղած են սր սուլթանը Հայոց պաշտօնական ներկայացուցիչները պալատը կանչելով կարգ մը խոստումներ ընէ: Հայաստանի համար պատն յուսախարութիւններով լեցուն երեք տարուան պաշտօնավարութենէ մը ետքը Օրմանեան պատրիարքը, ազգային ճնշումէն բռնադատուած, հրաժարելու անխուսափելի հարկին առջեւ պիտի խոնարհէր: Վարչապետ Տատեան Յարութիւն փաշա, իր երբեմնի ժողովրդականութեան հիւժումէն ահաբեկ, եղբրական վախճանի մը նախազգացումէն մղուած, կը յայտարարէր թէ անկարող էր շարունակել 1896 ին ստանձնած պարտականութիւնները: Խառն ժողովին մէջ քանի մը ձայներ, լսելի ըլլալու առտիճան զօրեղ, կը պնդէին բողոքագրով մը սուլթանին ներկայացնել Հայաստանի կացութիւնը: Պատրիարք եւ Երւրազ կ'ըմբռնէին թէ պատրիարքարանէն ժայթքած բողոք մը յաղթական արդարացումը պիտի ըլլար Եւրոպայի եւ Ամերիկայի Հայոց Համաժողովին ներկայացուցած պահանջներուն: Պատրիարքարանը ինքն հերքում տուած պիտի ըլլար իր պատրիարքին Լա Հէ հեռագրած հերքումին: Լրումն եւ կատարումն խայտառակութեան: Ու այս ամէն խառնակութիւններէն սուլթանը իր քաղաքականութեանը համար անպատեհութիւններ կը գուշակէր, որոնց առջեւը շուտափոյթ առնելու պէտք կը զգար: Յուլիս 12 շորեքշաբթի օր գումարուելիք խառն ժողովի նըստին մէջ պիտի վճռուէր բողոքագիրը պատրաստելու եւ ներկայացնելու պէտքը, եւ ահա երեքշաբթի օր պատրիարք ու վարչութիւն Երւրազ երթալու հրահրը կը ստանան, եւ շորեքշաբթի ալ «կայսերական բարձրագոյն բարեհաճ շնորհները» կ'աւետեն Խառն ժողովին: Ալ հրահ

ժարական, բողոք անպատեհ ցոյցեր կը նկատուին, եւ վրդովեալ մտքերը կը հանգստանան:

Ծանրահոգ մտատանջութեամբ հայ ազգը կը սպասէ իմանալու այն «բարեհաճ բարձրագոյն հրահրածները» որոնք կը սրտապնդեն պատրիարքը եւ անոր շնորհութիւն կը ներշնչեն ամրակուս մնալ աթոռին վրայ եւ զիմպրաւել ապագային, որոնք քաջաուղջ արին մը կը ներմուծեն Տատեանի հիւժախտաւոր վարկին թօքերուն մէջ, եւ որոնք Խառն ժողովին երկիւմունքներէն կը կորզեն «ամէն բանի վախճանն է գովելի» փառաբանութիւնը:

Մինչ այս տողերը կը գրենք դեռ ո՛չ մեզի, ո՛չ եւրոպական մամուլին ընդարձակ մանրամասնութիւններ հասած են յուլիս 11ին Հայոց տրուած գահացումներուն նրկատմամբ. կրնանք օակայն ենթադրել թէ պատրիարք եւ վարչութիւն յաղթանակի գոռումներով պիտի փութային աշխարհ թնդացնել եթէ լրջօրէն չկասկածէին թէ, իբր պատասխան, ահեղագոյ «ա՛յս է եղեր» մը պիտի ըստի: Օրմանեան պատրիարք լուն իբր ուղտ ազգին ընդունել սալու գաղտնիքին սքանչելապէս տիրած է, միայն թէ ձեռքը լու մը անցուցած ըլլայ. հաւանօրէն յուլիս 11ին առանց գիրուկ լուի մը ետ գարձած է Երւրազէն: Առ այժմ կը բաւականանանք արձանագրելով մեզի եւ անպիական թերթերուն հասած տեղեկութիւնները որոնք հետեւեալներն են.

1. Կայսերական քովուր մը, ընկերակցութեամբ Պատրիարքարանէն նշանակուած Կախիսկոյով մը, Կեղեկո պիտի երթայ կաթողիկոսական ընտրութիւն կատարելու.
2. Կարգ մը քաղաքական բանտարկեալներ ազատ պիտի արձակուին.
3. Տուրքերու հաշիւէն վանքերու պարտքերը պիտի շնջուին:

Իսկ այս «շնորհներուն» փոխարէն վարչութիւնն ա Սահմանադրութեան վերաբնութիւնը՝ այսինքն բարձուը պիտի փութացնէ:



Երեք տարիէ ի վեր ազգին ստուար մեծամասնութիւնը յամաօրէն Կ. Պոլսոյ պատրիարքարանէն կ'ակընկալէ Հայաստանի վիճակին բարեփոխման զօրաւոր միջամտութիւնը: Չենք ուզեր այս սեղ քննել հանրային

մտքին այս ուղղութեան պատճառները, ո՛չ ալ այդ յուսադրութիւնը արդարացնել կամ դատապարտել: Կը բաւականանանք իրողութիւնը արձանագրելով եւ անկէ կ'առաջնորդուինք ազգին հոգեբանական վիճակը զննելու եւ ապագան մինչեւ աստիճան մը ընդնշմարելու համար:

Առանց շատ ետ երթալու, միայն վերջին հինգ տարուան պատրիարքական եւ վարչական ընտրութեանց արդիւնքները քննելով որոշ կը տեսնենք թէ Պատրիարքները ու կեդրոնական վարչութիւնները իրենց ժամանակներուն հանրային կարծիքին եւ ազգային ընդհանուր զգացումին հարազատ ծնունդներն են: Այսպէս, 1894-95ին Իզմիրեան Մատթէոս եպիսկոպոսը պատրիարքութեան, ու եռանդուն վարդապետներ եւ անկախ դիրքի տէր անձնաւորութիւններ կեդրոնական վարչութեան կոչուեցան. ազգային օրուան քաղաքականութիւնը խիզախ ղեկավարներ կը պահանջէր: Սակայն Իզմիրեան եպիսկոպոսը եթէ 1894ին պատրիարք ընտրուած չըլլար, Ազգային երեսփոխանութիւնը 1896ին իր քուէն պիտի չամփոփէր այդ եկեղեցականին վրայ: Անշուշտ Իզմիրեանի յատկութիւնները երկու տարուան մէջ այլափոխուած պիտի չհամարուէին, բայց երկու տարուան ժամանակամիջոցին պատահարներէն հայ ազգը քաղաքական նոր ուղղութեան մը, կամ աւելի ճիշդը՝ ազգային հին, նախ քան 1878ի քաղաքականութեան վերադարձի պէտքը զգացած ըլլալով, իրեն առաջնորդելու պիտի հրաւիրէր Իզմիրեանի յատկութիւններէն սարբեր ձիրքեր իրենց վրայ փայլեցնող անձնաւորութիւններ: Այս ուղղութեամբն է որ փաշա մը վարչապետ, եւ Օրմանեան եպիսկոպոս պատրիարք ընտրուեցան: Տատեան Յարութիւն փաշա ներկայացաւ 1896ին վերջերը, իբր իսկական քաղաքագէտը որ պիտի կըրնար ամենածանր վտանգներով պաշարուած կացութիւն մը փրկել: Առանց վարանելու կ'ընդունինք թէ հայ ազգին գոնէ ամենաստուար մեծամասնութեանը համար առանձնաշնորհեալ հայ պետական մարդն էր Տատեան փաշա: Ազնուահոգի Հայն էր ան որ երբեք փորձութիւն չէր ունեցած իր ազգին ոսկորներէն իր բարձրացումին պատուանդան կառուցանել. հաւատացեալ քրիստոնեան էր որ թէեւ վէզիր-փաշա բայց համալին հետ եկեղեցի կը յաճախէր, եւ կը պաշտէր իր կրօնքը անկեղծ ջերմեանովութեամբ. ազնուատուհմ էր, որ փառապանծ հին տան մը պետը, անոր ազգասիրութեանը եւ կրօնասիրութեանը համբաւին նախանձախնդիր աւանդապահը կը ներկայանար. տաղանդաւոր քաղաքագէտն էր զոր Եւրոպայի ղեկանազէտները մեծապէս կը գնահատէին ու կը յարգէին. հին Հայն էր որ Օսմանեան գահուն հաւատարմութեանը մէջ միայն կը փնտռէր հայ ազգին երջանկութեան հնարաւորութիւնը. երախտապարտ անձնուէրն էր սուլթանին որուն պապերը եւ հայրը բիւր բարեքնելով ողողած էին իր ընտանիքը, եւ որոնց յիշատակին կը կցէր արդի սուլթանէն իր վայելած բազմալիմի շնորհներն ու վէզիրութեան տիտղոսը: Ու երբ հայկական, կրօնական, քաղաքական այսքան բազմազգի մի առաքինութիւններով օժտուած հոշակեալ Հայը իր

ցեղին պատմութեան էն ահռելի մէկ ըսպէին առաջ պացաւ փրկութեան ձեռք կարկառելու հալածուող, կտորտուող իր եղբայրներուն, հայ ազգը երկնառաք ոգի մը կարծեց տեսնել անոր մէջ, ու սրտապնդուեցաւ հաւատքով եւ ակնկալութեամբ: Ո՛չ միայն Թիւրքիոյ այլ եւ Ռուսիոյ եւ Պարսկաստանի Հայերը սփոփանքի զգացումով մը ողջունեցին Տատեանի վարչապետութիւնը:

Տատեան փաշա չուզեց կաշկանդուիլ գործելու ազատութեանը մէջ. իր ժատնանիչ ըրած եկեղեցականը պատրիարք եւ իր համարումին արժանացող անձերը վարչութեան անդամ ընտրել տուաւ: Պատրիարք եւ վարչապետ միահեծան վարիչներ հանդիսացան, իրենց զօրավիզ ունենալով ազգին ստուար մեծամասնութեան համակրանքը, Եւրոպայի համարումը, սուլթանին վստահութիւնը:

Ահա թէ ինչու համար հայ ազգը երբեք սարիէ ի վեր յամառութեամբ պատրիարքարանին վրայ յուսադիր կը մնայ կամ կը մնար:

* * *

Նորընտիր պատրիարքը եւ վարչութիւնը շատ խանգարուած ժառանգութիւն մը կը գտնէին: 1878ին ողջունուած քաղաքականութիւնը եկած յանգած էր 95-96ին: Հայոց պատրիարքը Սան-Սթէֆանօ Ռուսաց դիմելով մէկ օրուան մէջ շնջած էր հինգ դարու ազգային քաղաքականութեան արդիւնքները: Այդ օրէն հայ ազգը այլ ևս սքանչելապէս հաւատարիմ ժողովուրդը չէր Թիւրքին աչքերուն: Օսմանցիին համար Սան-Սթէֆանոյի այցելութիւնը յեղափոխութեան անհունապէս աւելի թշնամական ձեռնարկ մըն էր պետութեան դէմ: Հայոց ազգը օսմանեան կայսրութեան դարաւոր, անողոքելի, մահացու թըշնամիին զիրին էր նետուած երբ անիկա մայրաքաղաքին դրան առջեւն էր հասած: Խուլ կռիւր այդ օրէն ի վեր անդադրում շարունակութեամբ յարատեւելով առաջ բերած էր 94-95-96ի փոփոխակի յաղթանակները և պարսութիւնները:

Հայ ազգը սրտին խորէն վիրաւորուած ու իր շահերուն մէջ ծանրապէս վտանգուած, Թիւրքը Հայուն դէմ մոլեղնոտ եւ վստահութիւնը անոր վրայէն բախրողին վերցուցած, ահա Օրմանեան եւ Տատեան ինչ վիճակի մէջ կը գտնէին հայ ազգին եւ Թիւրք իշխանութեան փոխադարձ յարաբերութիւնները: Անուրանալի է թէ կացութիւնը շատ զճնդակ էր, բայց մեծ սրտի եւ մեծ մտքի տէր մարդը կը հաստատուի ժողովրդի մը սաղնապնդուն ատենը: Ֆրանսա 1871ին ահռելի կերպով վտանգուած էր. ձերբունի մը, Թիւրք, հայրենիքին ազատութեամբ եղաւ: Ամէն համեմատութիւն պահելով կրնանք ըսել թէ 1896ին Տատեան հայ Թիւրքի դիմագծերուն ներքեւ կը ներկայանար հայութեան:

Որքան որ ալ 1896ին տագնապալից էր հայ ազգին վիճակը, բայց վերակենդանութիւնը դիւրացնելու նպատակով հանդամանքները չէին պակսեր: Եւրոպա կը փա-

փառքը այսպէս թէ այնպէս հայկական խնդրին կ'ընդհատու-
թիւններուն լուծումը բարեկարգութեանց միջոցաւ: Թիւր-
քերուն մէջէն խելահաս մաս մը կը սկսէր ըմբռնել թէ Հա-
յոց զէմ' իրենց հետեւած վայրագ ընթացքը կայսրութեան
համար կրնար տնտեսական եւ քաղաքական ծանրածանր
վտանգներ սպառնալ: Սպառած չէր նաեւ հայ ազգին
կենսական ուժը, աւելի զգուշաւոր ընթանալու խորհուրդ-
ները ո'չ յուսահատութիւն, ո'չ ալ տկարութիւն կրնային
հնթարել տալ: Լրջօրէն խորհողներէն ո'չ ոք կ'ուզէր որ
անդէպ ցոյցեր Օրմանեանի եւ Տատեանի քաղաքականու-
թեանը խոչընդոտները ըլլան: Երեք տարի է հանդարտու-
թիւնը կը տիրէ. պատահած մանր մունր տղայական մէկ
երկու զէպքեր, որոնք ազգին միահամուռ ձայնէն դատա-
պարտուեցան, ո' եւ է կարեւորութեան զուրկ են: Նորըն-
տիր պատրիարք եւ վարչութիւն ուրեմն ոչ միայն ազգէն
առանց խոչընդոտի հանդիպելու կրնային քաղաքական ծը-
րագիր մը գործադրել, այլ եւ ազգային մարքին ուղղու-
թեան, Եւրոպայի տրամադրութեան, օսմանեան իշխանու-
թեան վարանումներուն մէջ կրնային տեսնել իրենց քա-
ղաքականութեանը նպաստաւոր աշակցութիւններ:

Բայց Օրմանեան եւ Տատեան աչքերնուն առջեւ ու-
նէին հեռաւոր որոշ նպատակ մը որուն հասնելու համար
քաղաքականութիւն մը խորհած ըլլային: Ո'չ: Եթէ Օր-
մանեան եւ Տատեան իրենց վրայ դրուած յոյսերը կարող
չեղան մասամբ իսկ արգարացնել, այս անյաջողութիւնը
պէտք է նախ եւ առաջ վերագրել որոշ նպատակի մը չգո-
յութեան:

Երբ կը լսենք այն խնդրանքները զոր պատրիարք ու
վարչապետ երեք տարիէ հետո սուլթանին կը ներկայա-
ցնեն իբր ազգին ըզձանքներուն գերագոյն արտայայտու-
թիւնը, որոնց արուած գոհացումէն ազգը պիտի մոռնայ
անցեալը եւ գեղեցիկ ապագայի մը հաւատարմութիւն պիտի ու-
գեւորուի, անմիջապէս կ'ըմբռնենք թէ ո'չ պատրիարքը,
ո'չ վարչապետը իրենց բացառիկ կոչումին գիտակցութիւ-
նը ունին: Քանի մը հոգի բանտէն ազատելու, զբաժան
բանի մը խնդիրներ կարգադրելու համար չէր որ պատ-
մական ճգնաժամի մը Յարութիւն փաշա իր վրայ հրաւի-
րեց ազգին, Եւրոպայի, կառավարութեան ուշադրութիւնը:
Պզտիկ էֆէնտի մըն ալ, պարզ խանութպան մըն ալ վար-
չապետ եթէ ընտրուէր կրնար առանց ո' եւ է անպատե-
հութեան այգօրինակ անմեղ խնդրանքներ ազերսել սուլ-
թանէն: Տատեան Արթին փաշայի զիրքն ունեցող անձ-
նաւորութեան մը ուրիշ բան կ'ակնկալէր զինքը պաշտօնի
կոչող, իրեն վրայ անհուն վստահութիւն ունեցող ազգա-
յին մեծամասնութիւնը:

Սան-Սթէֆանոյէն մինչեւ 1896, մօտաւորապէս
քսան տարուան պատմութիւնը ուսումնասիրելով Յարու-
թիւն փաշա պիտի տեսնէր թէ ո'չ ազգային յեղափոխա-
կան շարժումը իր ամբողջութեանը մէջ բոլորական խելա-
ցընոր յիմարութեան մը ծնունդն է, ո'չ ալ Հայոց զէմ'
թրքական հալածանքին սաստկացումը պարզապէս վատ-
թար վարչութեան մը բնական հետեւանքը միայն: Յեղա-

փոխութիւն եւ հալածանք ինքնապաշտպանութեան զէնքեր
նկատուած են երկու կողմին համար ալ: Սան-Սթէֆա-
նոյէն ի վեր թրքական կառավարութիւնը Հայոց տկարա-
ցումին, աղքատացումին, ու վերջապէս ա'լ բոլորովին ու-
չընչացումին մէջ փնտոնեց օսմանեան պետութեան կանգուն
մնալուն կենսական պայմաններէն մէկը. Հայն ալ ինքնա-
պահպանութեան համար կոուելու սկսաւ ու բնականաբար
պիտի կոուի մինչեւ վերջը, որպէս զի ապրիլ կարենայ:
Հայ եւ Թիւրք իրարու զէմ' կանգնած երկու բանակներ
են. յաջողութիւնը մերթ մէկուն, մերթ միւսին կողմը կը
հակի: Ուրեմն պզտիկ աննշան զիջումները չեն որ քաղա-
քային պատերազմին վերջ պիտի գնեն եւ խաղաղութիւնը
պիտի վերահաստատեն: Ո'չ այդ յուլիս Ա՛՛ի «կայսերա-
կան բարեհաճ շնորհներէն» հայ ազգը կը խաբուի, ո'չ ալ
եկեղեցականներէ ումանց բերնէն թափթփած քանի մը
փառարանութիւններէ՝ թիւրք իշխանութիւնը: Չարիքը շատ
խոր է, եւ զարմանը ոչնչութիւններու մէջ փնտոնելու չէ:

Հայ ազգին ազատական մասը կը հաւատայ թէ ինք-
նապաշտպանութեան կոուին անպուշ շարունակութեամբը
վերջնական յաղթանակը ազգին պիտի մնայ, աշակցու-
թեամբ Եւրոպայի: Իսկ «պահպանողական» անունին
տակ ճանչցուածները օսմանեան կառավարութեան եւ հայ
ազգին միջեւ փոխապարձ վստահութեան վերահաստատու-
թեամբ միայն բարուք ապագայ մը կը յուսան: Երբ սուլ-
թանին ծառայող բարձրաստիճան պաշտօնատար մըն է որ
վարչապետութեան պաշտօնին կը կոչուի, բնական է որ
պահպանողական մէթոտներով միայն պիտի ջանայ ազ-
գին ապագան բարուքել: Ո'չ ոք Տատեանէ մը յեղափո-
խական սպասարկութիւն պահանջեց: Վարչապետ Յա-
րութիւն փաշային կոչումը այս փոխապարձ վստահութիւնը
հաստատելու մէջ կայանալով, իր պարտականութիւնն էր,
եւ այսպէս կը պահանջէր խելացի մտածութիւնն ալ, խըն-
դիրը առանց մանուածապատ գարձուածներու ուղղակի իր
տիրոջը առջեւ գնել եւ վճռական լուծումի մը յանդի-
Յարութիւն փաշա սրամիտ, խորհելու եւ խօսելու վերին
աստիճանի կարող, կա'մ' պիտի կրնար համոզել սուլթա-
նը, կա'մ' ոչ: Առաջին պարագային՝ հայկական խնդիրը
նոր շրջանի մը մէջ կը մտնէր, իսկ երկրորդ պարագային՝
Յարութիւն փաշա անպատանալի հրաժարականը տալու էր:

Թրքական վարչութիւնը երկու տեսակ յոռութիւն ու-
նի, բնածին եւ արհեստական: Բնածին յոռի վարչու-
թեամբ Թիւրքերը Հայն ալ, Յոյնն ալ, Իսլամն ալ, Հա-
յաստանն ալ, կրեանն ալ, Եթէմէնն ալ գէշ կը կառավա-
րեն: Արհեստական յոռութիւնը պարագաներու ծնունդ է:
Դարուս առաջին քառորդին Հայերը Պոլիս հանգիստ էին,
եւ Յոյները բացառիկ կերպով հալածուած. դարուն վեր-
ջին քառորդին Յոյները իրենց պատմական հայրենիքին
մէջ հանգիստ ու ապահով են, ու Պոլիս Հայերն են
որ կը տառապին: Նոյն բաղադրութիւնը եւ նահանգնե-
րուն համար ալ: Ո'չ Յարութիւն փաշա ո'չ աշխարհիս
վրայ ո' եւ է զօրութիւն կարող է թիւրք վարչութեան բը-
նածին յոռութիւնը դարմանել. ինչ որ կարելի էր ընել

այդ ուրիշ բան չէր բայց եթէ արհեստական յոռութեան ջնջումը յաջողցնել: Տատեան Յարութիւն փաշա որ ո՛չ ծրագիր ունէր, ո՛չ նպատակ, հետեւաբար ո՛չ հեռատես էր ե ո՛չ ալ քաջասիրտ, կարող չեղաւ ո՛չ քաղաքագէտ մտքով ազգել Երլարզին վրայ, ո՛չ խնդիրը կտրուկ կերպով սուլ- թանին ներկայացնել, ո՛չ ալ հրաժարիլ:

Տատեան փաշա իր հեղինակութեան սահմանը չը կրցաւ չափել. քաղաքական կացութեան բացարձակ տէրն էր, եւ կարող էր, ու թիւրքիոյ մէջ ինք միայն կարող էր, պահպանողականներու յոյսերը արդարացնել, եւ սուլթա- նը զնել այնպիսի ճամբու մը մէջ որմէն թէ՛ հայ ազգը կարենար օգտուիլ, թէ՛ օսմանեան պետութիւնը ալ աւելի նպաստատրուէր: Յարութիւն փաշան լայն մտքի տէր, զօրեղ նկարագրով ամրապինդ պետական մարդը չհան- դիսացաւ: Այդ տխուր երեւոյթը դիւրաւ կը բացատրուի: Գրեթէ կէս դար Դրան մթնոլորտին մէջ ապրող պաշտօ- նատար մը պէտք է Արեւելցիի մը բնաւորութենէն շատ տարբեր ուժեղ բնաւորութեամբ մը օժտուած ըլլայ որ- պէս զի ապականութիւնը իր ուղնուծուծը չթափանցէ: Տատեան Արթին փաշան իր շատ բարձր պաշտօնին մէջ պարզապէս քաղաքականութեան ձեռնածու մը եղաւ, եւ ոչ թէ քաղաքագէտ պետական մարդը: Ահեղ պատասխա- նատուութիւն մը կը ծանրանայ իր վրան, եւ մտքով շատ կարճատես է քիչ մը հեռուն դիտելու համար:

* *

Օրմանեան պատրիարքին վրան ալ շատ յոյսեր զրը ուած էին. եւ ամենքը պարապը հանեց: Օրմանեանի գծարդութիւնը ճարպիկ մարդ ըլլալն է: Անձուկ շրջա- նակի մը մէջ ճարպիկութիւնը կրնայ մանր մունր գործեր յաջողցնելու նպաստել: Ազգի մը վերակենդանացումին նախագահողները հսկայական գործ մը պիտի կատարեն որուն յաջողութեանը համար ճարպիկութիւնը աղիտաբեր կրնայ ըլլալ եթէ խելքի, նկարագրի, լրջութեան, պար- կեշտութեան եւ անձնութիւնութեան տեղ բռնէ: Օրմանեան պատրիարք միայն եւ մի միայն ճարպիկ մարդ մնաց. անպարար մըն ալ ինք եղաւ:

Պատրիարքը զգալով ժողովրդականութեան պէտքը միշտ ջանաց խաբուսիկ միջոցներով առերեւոյթ ժողովըր- դականութիւն մը վայելել: Եկեղեցիէ եկեղեցի վազվառե- լով, հանդէսներու նախագահելով, արեւագալ երգելով, քարոզներուն մէջ ուռուցիկ խոստումներ թմբկելով ժողո- վրդին սիրտը գրաւելու յաջողութեանը վստահեցաւ: Բայց հայ ազգը իր պատրիարքը սիրելու համար աւելի դրա- կան պահանջումներ ունի:

* *

Երեք տարուան պաշտօնավարութեամբ Օրմանեան պատրիարք եւ վարչապետ Յարութիւն փաշա շատ լայնե- ցին այն վիճը որ արդէն ազգը եւ թիւրք իշխանութիւնը

իրարմէ կ'անջատէր: Մինչեւ իսկ պահպանողականներու մտքին մէջ անգամ սաստկապէս տկարացուցին այն հա- մոզումը թէ սուլթանէն կարելի է յուսալ բարեկարգու- թիւն:

Անստոյգ ապագայ մը կը պատրաստուի. չարիքներու ամբողջ պատասխանատուութիւնը Օրմանեանի եւ Տատ- եանի վրայ պիտի ծանրանայ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Կ՝ ՊՈԼԻՍ

Դ

Կ. Պոլիս 1878 էն 79 Հայաստանի կրթութեանը խնամատար ընկերութեանց թիւր սկսաւ բազմանալ: Հայ- բնիքը շատ կարօտութիւններ ունէր ու Պոլսոյ նորահաս երիտասարդութիւնը ասպարէզ կը փնտռէ իր գործունէու- թեանը: Սրտապնդող երեւոյթ մըն էր տեսնել զպրոցէն զեռ հազիւ շրջանաւարտ երիտասարդներն ու երիտասար- դուհիները սրոնք իրենց կեանքին հանրային նպատակ մը կը զնէին, ու իրենց հանգստի ժամերը եւ օրերը փոխա- նակ զօրսանքի եւ հաճոյքի զոհելու, կը նուիրէին ազգին համար լուրջ աշխատութիւններու:

Կրթական երկու ընկերութեանց քով բարձրացաւ երրորդ մըն ալ՝ Կիլիկեանը, որուն հիմնադիրները Նու- պար-Շահնազարեան վարժարանի հիմնադիրներէն էին: Ինչպէս ընտրուած անունէն կը տեսնուի համանուն նահան- գը Կիլիկեաններուն աշխատութեան կեդրոնավայրն էր: Բարեգործական ընկերութեան տասնըհինգ տարի առաջ- ուան զազափարը կը վերածնէր, բայց փոխանակ երկրա- գործութեան կրթութիւն էր որ պիտի տարածուէր: Սան- տալճեան անունով երիտասարդ մը տեսուչ խրկուեցաւ Կիլիկիա: Անուշ դէմքով, զերուկ երիտասարդ մըն էր. զինքը տեսնողը բարի մարդուկի մը տպաւորութիւն կ'ու- նենար, ուրիշ ոչինչ: Բայց Սանտալճեան խելքի ու կամ- քի տէր տեսուչ մը հանդիսացաւ: Շուտ մեռաւ խեղճը. իր մահը մեծ կորուստ մը եղաւ Կիլիկիոյ համար: Արկէ ի վեր թէեւ շատ տարիներ անցած են բայց Կիլիկիացի- ները զեռ չեն մոռցած Սանտալճեանը որուն յիշատակը իբր սրբութիւն կը յարդեն:

Այդ թուականներուն ուրիշ երկու ընկերութիւններ ալ հիմնուեցան, Ազգանուէր Հայուհեացը եւ Դպրոցասէր տիկնանցը:

Դպրոցէն նոր շրջանաւարտ եղող օրիորդ մը որ իւս- կիւտար կը բնակէր, Ազգանուէրին զազափարը յղացաւ: Կ. Պոլսոյ երիտասարդները կը կրթէին Հայաստանի ման- չերը. օր մը կեանքը պիտի կազար հայրենիքին մէջ երբ ուսում ստացած երիտասարդին ընկերը անուս աղջիկն ըլլար: Ու իրենք Պոլսոյ կիները եւ աղջիկներն ալ պար- տականութիւններ ունէին հայրենիքին: Գաղթական հայ

կիններն ալ եկեղեցիէն դուրս Հայրենիքի մը գաղափարը ունէին: Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւնը հիմնուեցաւ Հայաստանի աղջիկները դաստիարակելու նպատակաւ, ու կարճ ժամանակամիջոցի մէջ Ազգանուէր Հայուհեաց վարժարանները հաստատուեցան այն տեղուանքը ուր Արարատեանը եւ Դպրոցասիրաց-Արեւելեանը վարժարաններ հիմնած էին:

Միեւնոյն ատենները Օրթոգոքի աղջիկները հիմնեցին Դպրոցասէր-Տիկնանց ընկերութիւնը, նպատակ ունենալով Հայաստանի համար վարժուհիներ պատրաստել: Օրթոգոք տուն մը վարձելով քանի մը աղջիկներ աշակերտ առին, իրենք ընկերութեան անդամուհիներն ալ հսկելով եւ դասախօսելով: Դպրոցասէր Տիկնանց վարժարանը հետզհետէ զարգացաւ. երկար ատեն Օրթոգոք մը նալ յետոյ փոխադրուեցաւ Գուլ-Գարու: Դպրոցասէր տիկինները Հայաստանի բազմաթիւ վարժուհիներ տալով հանգերձ, ազգին ալ տուին կրթուած, շնորհքով, սուսալ աղջիկներ:

Ազգանուէր Հայուհեաց եւ Դպրոցասէր Տիկնանց ընկերութիւններուն միջոցաւ Կ. Պոլսոյ կիները հանրային կեանքի մէջ մտան: Պոլսոյ ամէն թաղերէն կիներ եւ աղջիկներ որոնք ամէն գասակարգի կը պատկանէին, պարբերաբար զուարուած ժողովներով իրարու կը մօտենային: Ամենքը Հայաստանի համար կ'աշխատէին, Հայաստանը կ'ուսումնասիրէին, Հայաստանը կը ճանչնային: Այդ բոլոր գեռատի աղջիկները եւ կիները կը ստանձնէին այն պիսի աշխատութիւններ որոնց զժուարաւ կրնային տոկալ էրիկմարդերն իսկ: Արեւուն տակ պէտք էր տեսնել այդ փափկատունները, ձիւնին ու փոթորիկին գէմ — ճիշդ ճըլմարտութիւնն է — փողոցները շրջելով, խանէ խան պտըտելով, դռնէ դուռ զարնելով Հայաստանի կրթութեան համար հանգանակութիւն ըրած ատեննին որպէս զի կարելի ըլլար զազափար մը կազմել խանդին ո'ր ամենքը կը վառէր: Ու առդին ասոնց ամուսինները, եղբայրները, ազգականները կ'աշխատէին կրթական միւս ընկերութեանց մէջ: Պոլիս ամէն թաղ, ամէն տուն Հայաստանով զբաղած էր. Հայաստանի կրթութիւնը, Հայաստանի ապագան ամէնուն հոգածութեան առարկան էր, մինչ Ներսէս պատրիարքի նախագահութեամբ Հայաստանի հիմնական բարեկարգութեանց խնդիրը քաղաքականութեան օրուան հարցն էր: Օտար երկիրներէ այդ միջոցին Պոլիս եկող Հայերը սքանչացումի տպաւորութեան ներքեւ քաջալերուած կը կը մեկնէին, Հայաստանի ապագային վրայ զեղեցիկ յոյսերով սրտապնդուած:

Արարատեան ընկերութիւնը իր առաջին տարուան գործունէութեան համարը ազգին տուաւ, շատ համեստ տեղեկագրով մը: 1876-77 շրջանը մօտաւորապէս 140 ոսկիի եկամուտ մը եւ այնքան ալ ծախք ցոյց կու տար: Երկրորդ շրջանին սակայն ընկերութեան ելմտացոյցը ընդլայնուած էր ազգէն դատած ընդունելութեան շրնորհիւ: Ընկերութեան ներքին կազմակերպութիւնը երկու տարուան մէջ շատ յառաջացած էր: Պոլսոյ ու Եւրո-

պայի զանազան վարժարաններէ ելած աշակերտներ, Պոլսոյ ալ եւ այլ թաղերը բնակող ու շատեր իրարու անծանօթ, կամաց կամաց իրարու մօտեցան եւ կազմեցին հստիւմ մը որուն մէջ պիտաւորապէս Գատրգեղցիները, Գուլ-Գարուցիները եւ Օրթոգոքիները բազմաթիւ էին: Ընկերութեան մէջ ո' եւ է եկեղեցական չէր ընդունուած, նմանապէս Պոլսոյ թերթերուն խմբագիրներէն, սնօրէններէն ոչ ոք, ու միայն երկու ուսուցիչ կային: Շատ քիչ բացառութեամբ բոլոր անդամներս առեւտրական հրապարակին վրայ աշխատողներ էինք, Բարեկամութիւն, մտերմութիւն, շուտ հաստատուեցաւ մէջերնիս: Բայց երբ երկու տարին լրացաւ ան ատեն կանոնադրի փոփոխութեան հարցն ալ զգալի եղաւ: Այլ եւս կարելի չէր միաձայնութեամբ ընտրել նոր անդամները. ո' եւ է նկատողութեամբ տրուած մէկ քուէ մը կ'ոչնչացնէր ընտրելի ներկայացուածի մը յաջողութիւնը: Նոր կանոնադրը խմբագրուեցաւ մերժողական քուէի իրաւունքին սեղմումով. փոխանակ միաձայնութեան բաւական համարուեցաւ Պոլիս գտնուող ընկերներու քուէին երեք չորրորդը: Միեւնոյն ատեն կազմակերպութիւնը ամբապնդ ընելու կանոնադրները դրուեցան, եւ ընդհանուր ժողովին համար ներքին կանոնադրութիւն մը: Ընդհանուր ժողովը կանոնաւորապէս կը գումարուէր երկու ամիսը անգամ մը, եւ հարկին բացառիկ նիստեր ալ կ'ընէր: Այդ ժողովներուն մէջ մեծ ուշադրութեան առարկայ կ'ըլլային Հայաստանէն եկած տեղեկագիրները: Կրթական ծրագիրները շատ լուրջ խորհրդածութիւններով կը քննուէին: Գիւղական դպրոցները ընդհանուր կերպով միայն ձմեռները կրնային կանոնաւորապէս շարունակուիլ. զարնան սկիզբէն մինչեւ աշնան վերջերը զեղացի տղաքներուն ստուար մեծամասնութիւնը արտենն էին: Չմարն եղանակին քիչ բան պէտք էր սորվեցնել, բայց հաստատուն:

Իր երկրորդ շրջանը բոլորելուն առթիւ Արարատեան ընկերութիւնը որոշեց սեղանի մը հրաբիրել Կ. Պոլսոյ զանազան դասակարգի Հայերը, եւ տեղացի ու օտար մամուլի ներկայացուցիչները: Սեղանին ծախքը ընկերութեան սնուուկէն չհայթայթուեցաւ, այլ իւրաքանչիւր ընկերի կողմէ տրուած բաժիններու գումարովը: Գարնան այդ պայծառ արեւ արեգակ կիրակին Ղալաթիա մեծ փողոցին վրայ Արթինի ճաշարանը, Պոլսոյ էն համբաւաւոր հաստատութիւնը այն ատեն, մեծահանգէն տօնի մը շքեղութեամբ կը փայլէր: Հոն էին ընկերութեան անդամները, եւ հրաբիրեալներէն եկած էին՝ կրթական միւս ընկերութեանց ներկայացուցիչները, բարձրաստիճան հայ պաշտօնատարներ, հայ խմբագիրներ, վաճառականներ ու զրամատէրներ: Ներկայ էին միանգամայն Եւրոպայի երեք մեծ թերթի թղթակիցները: Հանգուցեալ Տօմասմէ կը ներկայացնէր Թաւը, Լը Շփալիէ՝ Տէպակ, եւ Մասոն՝ Բեդրպուրիկի ազատական Կոչուս մեծ թերթը, որ յետոյ ընդունեցաւ: Օտեան հիւանդութեան պատճառաւ ներդուութիւն կը խնդրէր հրաբիրին անձամբ չպատասխանելուն: Հանդէսին կը նախագահէր տիտղոսաւոր հայ բժիշկ

մը, այն ատեն շատ ժողովրդական: Քովէ քով էին Լը
Շվալիէ եւ Սերովլէ կիւլպէնկեան, ընկերութեան զրամա-
պահը:

Հանդէսը շատ փառաւոր եղաւ: Հայաստանի կրթու-
թիւնը, Հայաստանի ապագան ճառերուն, կեցցէներուն
առարկան էր: Երեք Եւրոպացիները սքանչելապէս խօսե-
ցան. կը յայտարարէին թէ եւրոպական մամուլը իր ան-
հուն համակրանքովը զօրավիզ մըն էր Արեւելքի այն ժո-
ղովրդին որ առանց ընկճուելու իր կրած տառապանքնե-
րէն, անվեհեր կը շարունակէ կրթութիւլ, զարգանալ, եւ
քաղաքակիրթ աշխարհին մէջ իր տեղը գրաւել: Կովկաս-
եան Հայերը, կովկասեան մամուլը արտակարգ համակ-
րանքով ողջունուեցան: Ընդհանուրէն անջատուեցան
Մշակ եւ Գրիգոր Արծրունի որոնց անունները երկու տա-
րիէ ի վեր Թիւրքիոյ Հայոց մէջ տարածուած ու ժողովրդ-
դական եղած էին. այդ անուններուն մասնաւոր պատիւներ
ընծայուեցան, ու շնորհակալութիւններ շոյալուեցան:
Եթէ դիպուածով մէկուն աչքին զարնէ այդ ատեն Մշակի
մէջ հրատարակած թղթակցութիւնս, ապշած պիտի մնայ
այն «անխոհեմութեանց» համար զոր գրած եմ: Հաւա-
նորէն ես ալ հիմակ նոյն ապշութիւնը պիտի զգամ թէ որ
այդ թերթերը ձեռքս անցնին. եւ սակայն այն ատեն ոչ
ոք կը նեղուէր այդպիսի հրատարակութիւններ ընելու:
Մշակ կարդացողը ո՞վ, թարգմանել տուողը ո՞վ, մեր գոր-
ծերուն հետեւողը ո՞վ ան ատեն: Ամէն պարագայի մէջ,
այդ հանգիստ որուն նկարագրութիւնը հրատարակեցին
նաեւ եւրոպական թերթեր, սքանչելապէս ներգործեց
Կովկասեան Հայոց վրայ, ի նպաստ Արարատեան ընկե-
րութեան:

* * *

Հայաստանի մտաւորական ու բարոյական վիճակը
որքան աւելի կ'ուսումնասիրէի այնքան աւելի կը հաս-
տատուէի այն համոզումիս մէջ թէ գիւղական դպրոցները
բաւական պիտի չըլլային հայրենիքին մտաւորական և բա-
րոյական վիճակը հիմնովին բարեփոխելու: Գեղացի Հա-
յերուն տրուած նախակրթութիւնը պիտի կրնար ծառայել
գեղերու անտեսական, առողջական վիճակը բարւոքելու,
եւ ժողովրդին զգացումները բարձրացնելու: Ո՛չ միայն
ինքնապաշտպանութեան գաղափարը պիտի սկսէր տա-
րածուիլ գեղերուն մէջ, այլ եւ այդ գաղափարը իրականա-
ցնելու միջոցներն ալ պիտի գործադրուէին աստիճանա-
բար: Եւ սակայն քաղաքները պիտի մնային իրենց նախ-
կին կացութեան մէջ. եւ ամբողջ երկիրը պիտի շարունա-
կէր իր մտաւորական դեկալարութիւնը Պոլսէն սպասել:
Հայաստանի ուղղութեան կեդրոնը Հայաստանի մէջ հաս-
տատելու համար պէտք էր գեղացիներէն այլապէս գերա-
զանցօրէն կրթուած մտաւորականներու սպայակոյտ մը
պատրաստել երկրին մէջ: Երկար ատեն մտածութիւննե-
րէ յետոյ առանց պզտիկ տարակոյսի մը համոզուեցայ
թէ Հայաստան պէտք էր կեդրոնական մեծ վարժարան մը

հիմնել: Գաղափարիս ծրագիրը մանրամասնօրէն պարզե-
լով ներկայացուցի Գործադիր ժողովին, որուն ամբողջու-
թեան հաւանութեամբ միայն հնարաւոր էր Ընդհանուր
ժողովին քննութեանը եւ վաւերացումին ենթարկել այդ
ծրագիրը:

Պ. Մ. Չերազ, Պերլին գտնուած միջոցին, Գործա-
դիր ժողովի անդամ եւ ատենապետ ընտրուած էր. մեր
ժողովին մէջ սաստկապէս դիմադրեց գաղափարիս եւ ծը-
րագրիս: Վիճաբանութիւնը մեր երկուքին միջեւ տեղի ու-
նեցաւ: Ես կը փաստաբանէի այն բոլոր առաւելութիւննե-
րը զոր կեդրոնական վարժարան մը պիտի կրնար ունե-
նալ Հայաստանի համար. Պ. Չերազ կ'ուզէր որ ընկե-
րութեան բոլոր ուժերը գիւղերու կրթութեանը միայն նը-
վիրուին. իմ փաստերուս դէմ ինքն ալ իր փաստերը ու-
նէր: Լսելով թէ՛ Պ. Չերազը եւ թէ՛ զիս, մեր միւս ընկեր-
ները կը մնային վարանոտ. ո՛չ մէկուն, ո՛չ միւսին կողմը
կրնային հակիլ բուրբովին, մանաւանդ որ զրամական մեծ
ծախքերու դուռ պիտի բացուէր, եւ վտանգաւոր կը համա-
րէին այդպիսի բռնան մը տակ մտցնել ընկերութիւնը,
առանց զրական ապահովութեանց: Կովկասի Հայերը
շատ ուրախութեամբ յարած էին հայ գեղացիները կրթե-
լու գաղափարին, եւ կը վախցուէր թէ քաղաքացիներու
գաստիարակութեանը համար հոգածու ըլլալ չուզէն, ու-
րով ընկերութիւնը իր ծախքերը հայթայթելու անկարող
գտնուի: Բոլոր այս առարկութեանց ալ պատասխաններ
ունէի. բայց վերջապէս իմ ըսածներս ալ ենթադրութիւն-
ներ եւ յոյսեր էին միայն որոնք կրնային իրականանալ
կամ ոչ: Վերջապէս ուզեցինք նախ կեդրոնական հաս-
տատութիւն մը հիմնելու օգտակարութիւնը որոշել կամ
ոչ, ու յետոյ խորհիլ զայն իրականացնելու միջոցներուն
վրայ, եթէ սկզբունքով այդ հիմնարկութեան պէտքը ըն-
դունուէր: Տեսնելով որ Պ. Չերազ եւ ես պիտի չկրնայինք
համաձայնիլ, միաձայնութեամբ սրոշեցինք խնդիրը Պ.
Փորթուզալեանի տեղեկագրել: Արարատեանի կրթական
տեսուչը Հայաստանը լաւ կը ճանչնար, անոր պէտքերը
մտնէր գիտէր, սուտի եւ իր կարծիքը մեծ կշիռ պէտք էր
ունենար մեր որոշումներուն մէջ: Պ. Փորթուզալեան գե-
րագոյն իրաւարար նշանակուեցաւ. մեր չէզոք ընկերները
յայտարարեցին թէ իրենց քուէն պիտի տան Պ. Փորթու-
զալեանի յայտնած համոզումներուն համեմատ: Որոշուե-
ցաւ որ թէ՛ Պ. Չերազ և թէ՛ ես մեր համոզումները և փաս-
տերը, իրարու կարծիքի դէմ մեր ունեցած փոխադարձ
առարկութիւնները առանձինն առանձինն տեղեկագրենք
Պ. Փորթուզալեանի: Ու այսպէս ալ ըրինք: Կեանքիս էն
արտակարգ յուզումի մէկ օրը եղաւ երբ ստացանք Պ.
Փորթուզալեանի վճիռը պարունակող նամակը. եթէ յայտ-
նուած համոզումը աննպաստ ըլլար իմ խորհուրդներուս,
հիմնովին պիտի քանդուէին այն բոլոր ծրագիրները որոնց-
մով կը հաւատայի թէ Հայաստանի վիճակին մէջ մեծ
փոփոխութիւն մը առաջ պիտի բերուի: Բացինք Պ. Փոր-
թուզալեանի նամակը: Ուրախութիւնս չափ եւ սահման
չունեցաւ: Բոլորովին ինձի համակարծիք էր Արարատ

եանի կրթական տնօրէնը: Այլ եւս ընկերներէս ո՛ր եւ է
 գծուարութիւն չկար սկզբունքը ընդունելու համար, մի-
 այն կը մնար այդ վարժարանին հիմնարկութեան եւ պահ-
 պանութեան միջոցները նախապէս ապահովել եւ լաւ դիւ-
 ուած ներկայանալ Ընդհանուր ժողովին: Անդամները շատ
 խոհեմ էին ու բնաւ չէին յօժարեր պզտիկ ծախքի մը
 դուր բանալ առանց առաջուց ապահովելու անոր յատ-
 կացուած եկամուտը: Ամենքն ալ վաճառականութեան
 մէջ մեծցած մարդեր էին: Եւ սակայն շահագիտութիւնը
 հանրային գործերու մէջ դրական առաւելութիւններ կ'ըն-
 ծայէ երբ գործողները ժողովրդի մը հոգեբանական կա-
 ցութիւնը լաւ ըմբռնելով անոր համեմատ շարժին: Ար-
 ցիւնքը միշտ անխալակն է, պայմանաւ որ հոգեբանա-
 կան գննութիւնն ալ անսխալ եղած ըլլայ: Այդ ժամա-
 նակները տակաւին մեր ազգային բարքերուն մէջ մտած
 չէր պարահանսկսի միջոցաւ մեծկակ դուրսը հաւաքելու
 սովորութիւնը. ընկերութեանց պէտքերը նուիրատուու-
 թիւններով կը հայթայթուէին: Արարատեանի անդամները
 իրաւունք ունէին երկչոտ ըլլալու, քանի որ պատրաստ
 դրամ շատ չկար, եւ ծախք ու սովորական հասոյթ ի-
 րար կը հաւասարակընէին: Ինծի համար յաջողութեան
 կամ անյաջողութեան խօսքը Մշակ պիտի ըսէր, ուստի
 կեդրոնական վարժարանին համար ժողովին հաւանու-
 թիւնը ստանալէ առաջ պէտք էր ստոյգ գիտնալ Մշակի
 մեզ ընկելը ձեռնառութիւնը: Այս մասին Գրիգոր Արծ-
 րունիի հետ բանակցելու համար պարտաւոր էինք նախա-
 պէս կեդրոնականին ծրագիրը յօրինել եւ իրեն ալ հա-
 զորդել:

Կեդրոնական վարժարանին համար շատ լրջօրէն խոր-
 հեցանք: Որոշեցինք վարժապետանոցի մը ծրագրով պատ-
 րաստել եւ անունն ալ վարժապետանոց գնել: Ուսուցիչ
 ըլլալու համար բաւական ընդարձակ սահմանի մէջ դաս-
 տիարակութիւն եւ կրթութիւն պէտք էր ստանալ: Ու
 վարժապետանոցէն շրջանաւարտները եթէ կրթական պաշ-
 տօն ալ չստանձնէին, իրենց ստացած ուսումը կը բա-
 ւեր կեանքի ամէն պարագաներուն համար, ու մանաւանդ
 հանրային գործերու ղեկավարութեան մէջ մեծապէս կըր-
 նային օգտուիլ իրենց սորվածներէն:

Վարժապետանոցին ծրագիրը Գործադիր ժողովին մէջ
 պատրաստելէ յետոյ զայն մտերմական նամակով մը Գը-
 րիգոր Արծրունիի խրկեցի, ընդարձակօրէն միանգամայն
 բացատրելով այն բոլոր ակնկալութիւնները զոր ազգը ա-
 պագային համար կրնար սպասել այդպիսի հաստատու-
 թենէ մը: Բնականաբար այդ բացատրութիւնները պիտի
 չհրատարակուէին: Եթէ Արծրունին իր հաւանութիւնը տար
 ներկայացուցած ծրագրիս եւ աշակցութիւնը խոստանար,
 այն ատեն միայն անոր յաջողութիւնը ապահովեալ կրնար
 համարուիլ: Քանի մը շաբաթ ետքը ստացայ Արծրունիին
 պատասխանը: Կատարելապէս համամիտ կը գտնուէր ին-
 ծի, պարզած բոլոր տեսութիւններս կ'ընդունէր, եւ կը
 խոստանար «Մշակ»-ի աշակցութիւնը նուիրել Արարատ-
 եան ընկերութեան զարգացումին:

Անհուն ուրախութեամբ սկսանք գործի պատրաստը,
 չիլ: Ընդհանուր ժողովին ներկայացուելիք տեղեկագիրը
 խմբագրեցի: Նոյն կիրակի օրուան նստին անդամներուն
 դրեթէ ամենքն ալ եկած էին, նախապէս գիտնալով թէ
 մեծ խնդիրներ պիտի յուզուին. ու արդարեւ անխոհեմ
 յանդգնութիւն մը կրնար սեպուիլ տարեկան 1000 սակի
 ծախքի մը դուր բանալ առանց գոնէ մասամբ ապահովե-
 լու համապատասխանող հասոյթը: Նոյն օրը երկու ժա-
 մէն աւելի խօսեցայ եւ ներկայացուած ծրագիրը փաստա-
 բանեցի ամէն տեսակէտներով: Արծրունիէն ստացած զը-
 րական խոստումներս հաղորդեցի. ատոնք բաւական եղան
 ամէն վարանում անհետացնելու: Երբագիրը ամբողջու-
 թեամբ ընդունուեցաւ միաձայնութեամբ:

Մեր ժողովը կը դուրսէինք Ղալաթիոյ կեդրոնական
 վարժարանը. մեր սրահին կիցը Մատենադարանին
 յատկացուած սենեակը նոյն օրը նիստ կ'ընէին ազգին
 բոլոր հարուստները, Տնտեսական Միութիւնը ա-
 ռաջ տանելու համար: Ունեւոր դասակարգին պատկա-
 նողները տարիէ մը աւելի է հիմնած էին այդ ընկերու-
 թիւնը, Հայաստանի տնտեսական վիճակին բարւոյնմանը
 նպաստելու նպատակաւ. ու մինչեւ այդ օրը դեռ ո՛չ որս-
 շում մը տուած էին, ո՛չ բան մը ըրած: Եւ ահա յանկարծ
 մեր սրահին դուրս բացուեցաւ ու Հայրիկ ներս մտաւ,
 խոփած գէմքով, տխուր, ցասկոտ: Հայրիկին միայն ներելի
 էր այսպիսի աշարճարքս վարմունք. բայց ամենքս ալ
 այնչափ զինքը կը սիրէինք որ եւ ոչ իսկ ուշադրութիւն
 ըրինք վարժունքին անկանոնութեանը:

— Գո՛ւք ի՛նչ ըրիք նայիմ, աղաքներ, ըսաւ. հարուստ
 աղաները կէս օրէն ի վեր խօսեցան, խօսեցան, ու դեռ
 բան մը չըրին. տարին լմնցաւ եւ դեռ խօսքերէն զատ ուրիշ
 բան չեն ըրած:

Ընդհանուր ժողովին ատենապետը իմացուց Վան
 վարժապետանոց մը բանալու համար տրուած որոշումը,
 եւ այս նպատակին համար պատրաստուած ծրագիրը:
 Առաւ Հայրիկ, նայեցաւ, կարդաց:

— Աս ամէնուն վրայ ե՛րբ խորհեցաք, հարցուց:

— Երբք շորս ժամուան մէջ լմնցուցինք, որբազան
 հայր, ըսաւ ատենապետը:

Հայրիկին գէմքը զուարթացաւ: Չափազանց դո՛հ
 մնաց. «Գործը ասանկ կը տեսնեն» ըսաւ: Օրհնութիւնը
 սուաւ, քաջալերեց:

Ու իրիկնադէմին խորհրդաւոր հանդարտութեանը մէջ
 չեմ գիտեր ի՛նչ սրտայոյզ վեհ տեսարան մըն էր հող
 միասին տեսնել կեսարացի, Վանցի, Բինկեանցի, Պոլ-
 սեցի, Ակնցի զաւակներ որոնց վրայ իբր Հայաստանի
 հոգին յանկարծ կուգար կը սաւառնէր Հայրիկ, այն րո-
 պէին երբ Վանը Հայաստանի մտաւոր ու բարոյական
 վերածնունդին կեդրոն կը հռչակուէր: Անխառն, մաքուր
 հրճուանքով, ցնծութեամբ լեցուն սրտով ժողովարահէն
 դուրս ելանք, Հայրենիքին համար բան մը ըրած ըլլալու:

խորին համոզումով: Ամենքս ալ հաստատ առաջադրած էինք աննկուն աշխատութեամբ յաղթանակել:

* * *

Վարժապետանոցին նպատակը եւ ծրագիրը կրնամ հետեւեալ կերպով ամփոփել:

Այդ հաստատութիւնը ո՛չ միայն Վասպուրականի այլ ամբողջ Հայաստանի, ո՛չ միայն Հայոց այլ բոլոր ուրիշ ցեղերուն կրթութեանն ու զարգացումին կեդրոնը ըլլալու վիճակուած էր: Աշակերտները պիտի ընդունուէին հետեւեալ եղանակաւ.

Վանի թաղային դպրոցներէն ամէն տարի պիտի ընդունուէին որոշեալ թուով մը աշակերտներ, մրցումի դրութեամբ.

Վասպուրականի գեղերու Արարատեան վարժարաններէն պիտի ընդունուէին յառաջադէմները.

Հայաստանի ամէն քաղաքներէն առանց բացառութեան աշակերտներ պիտի ընդունուէին ձրիաբար.

Նախ Վասպուրականէն սկսելով, յետոյ Հայաստանի ամէն կողմերէն ալ, ձրիաբար պիտի ընդունուէին, առանց ցեղի եւ կրօնքի խտրութեան, նեստորական, թիւրք, բիրտ, եզիտի, քրդըլ-պաշ տղաքներ:

Վարժապետանոցը այս ծրագրով նախ պիտի ապահովէր Վանի ապագան: Նպատակադրմամբ, ինձմեալ դաստիարակութեամբ զարգացած սերունդ մը որ Վարժապետանոցէն պիտի ելլէր, կարող պիտի ըլլար իբր Վանի քաղաքացի զանազան եղանակներով ամբողջապէս տիրապետել Վանի ազգային գործերուն: Այդ աշակերտները պիտի ըլլային ուսուցիչ, տնօրէն, հոգաբարձու, թաղական, երեսփոխան, ամէն բան. օր մը ամբողջապէս իրենք պիտի վարէին Վանն ու Վասպուրականը: Իսկ Վանի գեղերէն եկողները զօրեղ կրթութեամբ ուժովցած, իրենց պարտականութիւններուն գիտակցութիւնը ունենալով, հըզօրապէս պիտի նպաստէին այլափոխելու Վասպուրականի գեղերուն բարոյական, տնտեսական, առողջապահական վիճակը, եւ կապուելով Վանի հետ, ամբողջ Վասպուրականը ուժգնապէս զարգացնելու կարող պիտի ըլլային:

Հայաստանի զանազան քաղաքներէն ընդունուած աշակերտները օր մը վերադառնալով իրենց երկիրները հոն պիտի կատարէին այն պարտականութիւնները ինչ որ Վանեցիները պիտի ընէին Վասպուրականի մէջ: Ամէն մէկ քաղաքի մէջ Արարատեան վարժապետանոցի շրջանաւարտներու խումբ մը հետգհետէ պիտի յաջողէր ըստանձնել հանրային գործերու ուղղութիւնը, ու միանգամայն նահանգին գիւղերուն կրթութեանն ու զարգացումի հոգածութիւնը իր վրայ առնել:

Վարժապետանոցը դաստիարակուած աշակերտները, սերտ կապերով իրարու հետ միացած, ետքէն երբ գործող երիտասարդներ դառնային, ամենքը մէկտեղ համերաշխութեամբ պիտի աշխատէին մէկ հայրենիքի զարգացումին համար մէկ ուղղութեամբ, Հայաստանի մտաւորական կեդրոն ունենալով Վանը:

Հայոց հայրենակից այլացեղ, այլակրօն ժողովուրդները հայկական դաստիարակութեամբ կրթելու օգուտ-

ները շատ ակներեւ էին: Հիմնովին սխալ համոզում մըն է թէ երկիր մը կրնայ յառաջդիմել, զարգանալ երբ իր բնակիչներուն կարեւոր մէկ մասը կը մնան անկիրթ, սղէտ, վայրագ, բարբարոս, իրարու մահացու թշնամի: Արարատեան ընկերութիւնը Հայաստանի բոլոր ցեղերուն մէջ համերաշխութեան գաղափարը հաստատելու, ամենքը հայկական կաղապարով բարոյապէս ի մի ձուլելու նպատակն ունէր, երբ որոշեց վարժապետանոց բերել ամեն ցեղի եւ կրօնքի պատկանող Հայաստանցիները: Շատ դժուար ձեռնարկ մըն էր, բայց համբերութեամբ եւ խոհմութեամբ գործելով յաջողութիւնը կ'ապահովուէր:

Հայաստանի տեղական դպրոցները, Կ. Պոլսոյ միւս ընկերութեանց Հայրենիքը հիմնած վարժարանները մեծ զարկ մը կուտային դաստիարակութեան ծաւալումին. ու ապագային այդ բոլոր անշատ աշխատութիւններէն պիտի կազմուէր ամբողջութիւն մը զոր ստեղծելու համար շատ պիտի նպաստէր Վարժապետանոցը:

Կրթական ծրագիրը խճողեալ չէր: Ընդհանուր սկզբունքներն էր տղոցը քիչ բան սորվցնել: Խեղ մը հարեւանցիկ ծանօթութիւններով ուղեղին բեռնաւորուած իմաստակները ազգի մը համար աւելի մեծ շարիք մըն են քան թէ զուտ սղէտները: Ու պատանիներուն նկարագիրը նամանաւոր զօրացնելու պէտք էր ձգտել: Դաստիարակութեան եւ ուսումի նուիրուած ինձմեկին չափ, ու մինչեւ իսկ անկէ ալ աւելի, հոգ պիտի տարուէր մարմնական բարգաւաճումի: Ամէն մէկ աշակերտ պարտաւոր պիտի ըլլար քաջամարտ հանդիսանալ լողալու, ձի նստելու, մարմինը ճապուկ, տոկուն, ամրապինդ ընելու ամէն մարզանքներու մէջ: Ուսումի մէջ տկարութիւնը ներքի պիտի ըլլար մինչեւ աստիճան մը, բայց մարմնամարզի մէջ ոչ:

Այս բոլոր գաղափարները ընդարձակօրէն հաղորդած էի Արժրունիին: Զգաց թէ Մշակի ուղղութիւնը մեծապէս ազդած էր Պոլսեցիներու մտքին վրայ: Մշակ շարունակ կը պաշտպանէր Կովկասի ամեն ցեղերը դաստիարակելու, քաղաքակրթելու հարկին վրայ: Կը բարոզէր թէ Հայը իր բարոյական զօրութենէն պէտք է օգտուի նպաստելու համար Կովկասի իրեն հայրենակից ուրիշ ցեղերու յառաջդիմութեանը: Բնական էր որ Արժրունին տեսնելով այդ գաղափարներուն գործադրութեան սկզբնաւորութիւն մը թրքահայտակ Հայաստանի մէջ, սրտանց պիտի ուրախանար, մեծ յոյսեր պիտի տածէր մեր ապագային վրայ եւ իր բոլոր աշակցութեամբը ուժ պիտի տար մեր աշխատութեանց յաջողութեանը:

Իմ անդադրում թղթակցութիւններս «Մշակ»ի մէջ, «Մշակ»ի ծաւալումը Պոլիս եւ Հայաստան, գաղափարներու փոխանակութեան հոսանք մը կը ստեղծէին ռուսահայտակ եւ թրքահայտակ Հայոց միջեւ, ու համերաշխութեան կապերով մեզ ամենքս կը միացնէին իրարու: Ու հիմա յիշելով այդ անցեալը ինչ երազանքներու մէջ կը խորասուզուիմ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՄԵՆԱՌՐԻ ՄԸ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Լոնտոն, 20 յուլիս 99.

Սիրելի Գրիգոր,

Ուրեմն կը համակերպվիս: Չորս տարի է անդրդուելի հաստատամտութեամբ, ըսեմ յամառութեամբ, ամէն օր կը հաւատայիր թէ Հայաստանի բարեկարգութեան խնդիրը մէկ երկու ամիսէն կը լուծուի, ու ամենքս ալ մեր ասունը սեղը կը վերադառնանք եւ նորէն հոն մեր Հայրենիքին մէջ կը սկսինք մատուրական հաճոյքներուն վայելումը՝ կեանքի մեր միակ հրճուանքը՝ որ մէկէն ի մէկ ընդհատեցաւ: Ու հիմակ երկու տողով կը գրես ինծի, թէ մը ամչկոտութեամբ, որ առանց այլ ևս սպասելու Հայրենիքին հրատարակութեանը, փութամ օդնել ձանձրոյթիդ փառասումին, թեզի երբեմն երբեմն հաղորդելով տպաւորութիւնները զոր օրուան դէպքեր, զրքի մը ընթերցում, արթնցած յիշատակ մը կը թողուն մտքիս վրայ, — կը մտնաս սիրտը:

Այսպէս գուն ալ կը սկսիս զգալ թէ այսօր կամ վաղը չէ որ Պոլիս պիտի վերադառնանք: Ո՞ւր կ'ից յանկարծածին այս յուսահատութիւնդ եւ ինչո՞ւ: Չորս տարի է Հայ մը գիտէ՞ թէ վաղը ո՞ւր պիտի իյնայ: Երջանկայիշատակ Եզովբոսին մէկ անգամ պատահած արկածը մեր ամենուս օրուան ընթացիկ կեանքն է: Դատաւոր մը ճամբան «Ո՞ւր կ'երթամ» կը հարցնէր ամէն իշխանութեան վրայ խնայող ստրուկին: «Ես ի՞նչ գիտնամ» եղաւ հեզնաբանին արհամարհական պատասխանը, որուն պատիժն ալ՝ բանտարկութիւն: Ու զընդանին մէջ Եզովբոս «Էհ, էհ, կը կը գոչէր յաղթականի սիգաձայն շեշտով, գիտէ՞ թէ բանտ պիտի գամ:» Երբ ԳՏի դարնան կը պատրաստուէինք Էրզրում թերթ հրատարակելու, մենէ ոչ մէկուն մտքէն կ'անցնէր թէ քանի մը ամսէն կրնայինք Երուսալմ նետուիլ ու մեր պայքարը հոն շարունակել: Վա՛ղը:

Վաղը աչքս Պոլիս բանալու տենչանքը իս չի տանջեր: Դուն Պոլիսը շատ կարօտցե՞ր ես, գոնէ հիմակուանը: Անցած շաբթու Ռըքին կը կարգայի. կը վարդապետէ թէ հայրենիքին սէրը անոր բնութեան գեղեցկութենէն կը բղխի. ու այդ գեղեցկութեան տեսիլը որքան աւելի դու թիչ, սէրն ալ այնքան աւելի գուրգուրական է: Է՛հ, Պոլիսը շատ աղւոր է, «բնութեան էն իտէական ստեղծումը» ըստած է. մեր աչքը արեւուն ճառագայթները էն առաջ հոն ծծած է, ու մեր մանկութեան, պատանեկութեան, երիտասարդութեան բոլոր յիշատակները Պոլիս կը թանգարանուին, եւ սակայն ինչո՞ւ հիմայ Պոլսոյ կարօտը չեմ քաշեր: «Մարդ մարդով շէն է» ըսած են. սուտ խօսք չէ. ու հիմա Պոլիս մարդ չի կայ: Կարծիքս թեզի արտաոսոց չեքեմնայ: Ո՞վ է մարդը. կամ աւելի ճշգրտեմ հարցումս՝ ո՞վ որու համար մարդ է: Փնտռէ պատասխանը որ ան-

շուշտ պարզութեան վսեմութիւնը պիտի չունենայ:

Միջին դարէն մնացած չորս պատ՝ նախկին կուսանտան, նախկին բանտ, եւ որուն ցածկէկ պատուհաններէն երկնքի ճեղքուածք մը հազիւ կ'ընդնշմարուէր, ահա մեզի համար ամբողջ բնութիւնը Պոլիս: Տասնըչորս ժամ էն թիչը հոն փակուած կ'անցընէինք, ո՛չ լուր օր կար, ո՛չ կիրակի: Ու ես այդ գեղեցիկ բնութեան կարօտն է միայն որ հիմա կը քաշեմ: Հոն գաղափարի կոխը կար: Հոն գաղափարը կը բանտարկուէր, կը շղթայուէր, իր ազատութեանը համար կը մարտնչէր, կը փախչէր, կը բռնուէր, ու միշտ կը կոուէր: Հոն էին գաղափարի մարդիկը, հոն կ'այցեղէին գաղափարի մարդիկը դրական ու քաղաքական: Հիմա ո՞ւր են այդ «մարդերը»: Յիրուցան. ու գաղափարն ալ բացակայ Պոլսէն:

Ու բնութիւնը միշտ ուրախ է, միշտ զուարթ Պոլիս: Անցած օր Արեւելք կեանքի պատկերի մը նկարին մէջ, կապիկ մը որ անձնասպան եղած էր — ան ալ կեանք մը ունի, կապիկն ալ — կը ներկայացնէր թուրքի մը իր տնակցին դիակին առջեւ ծպտուն, ուրախ. բանի մը սուղերը թեզի համար օրինակեմ. «Ու ես զարմացած «դեռ կարծես կը գիտեմ սա շղթային ծայրէն կախուող «փոքրիկ մարմինը, իր վրայ ծռած զլխովը, ու սա փոքրիկ թաթը որ վար շիջնալու համար շղթան բռնե՞ր է: «Ժամերով պիտի կենայի անանկ, թէ որ թուրքի յանկարծ կարծ իր խնայալէ մարդու ձուտ մարդու բահեհասովը, որ «կեանքն ու մահը չի զանազաներ, չի գար դիս սթա «փեցնել»:

Ու մարդիկ են, սրտեր են, գաղափարներ են Պոլիս ատ շղթաներէն կախուածները, ու գեղեցիկ բնութիւնը միշտ զուարթ, միշտ ուրախ «կեանքն ու մահը չի զանազաներ»: Կարօտնանք այդ բնութիւնը:

ՄԵՆԱՌՐԸ

* * *

Լոնտոն, 23 յուլիս.

Սիրելի Գրիգոր,

Շատ ցաւ զգացի օրերոյ Ֆրէզերի մահուան լուրը առնելու: Մեր ցեղին հաւատարիմ մէկ բարեկամը պակնեցաւ: «Ազգային եռասիրութեան ցաւ» պիտի ըսես: Իրաւունք ունիս. բայց միշտ եռասիրութիւնն է որ մեզի կը լացնէ: Մեռնողը ի՞նչ կը զգայ. զրկանքը սպորդինն է, որ իր սիրածը տեսնելու հաճոյքը ալ պիտի չվայելէ: Կորուստ սիրոյ կամ շահու, ահա ինչ որ անկեղծ արցունք կը բերէ մեր աչքերէն:

Բայց միայն դրական գաղափար մը չէր որ սիրտս կը կսկծացնէր Օրիորդին մահուանը համար: Գեղեցկասիրական ցանն ալ կար: Ածականը լայն ըմբռնումով ան: Չեւերու եւ երանգներու սահմանէն անդին անցիր. գեղեց-

կութիւնը փնտոէ ուսմի կենցաղաւարութենէ ազատուելու ըզձանքին մէջ ալ: Կեանքի տափակութիւններուն կ'աչած մնացած խաթունիկ աղջիկը չեղաւ օրիորդ Ֆրէզըր. անհունութեան մէջ կ'ուզէր թափառիլ, ու սլացաւ մինչեւ Վասպուրական: Կը սիրենք թոչունը որ վեր վեր կը բարձրանայ. աչքերնիս հմայուած անոր ետեւէն է, մինչեւ աներեւութանալը: Բնութիւնը ամենու սրտին մէջ նետած է սլացումին տենչը. ու երբ մենք թեւակտուր ենք, հոգինիս կը խանդավառի ի տես ուրիշներու որ կ'արփաթեւեն, եթէ անոնք օգապարիկ են, թոչուն, կամ օտարական:

Խեղճ աղջիկը չեմ ճանչցած. բայց քանի մը տարի տուալ Լոնտոն էր Վանէն վերադարձած ու զինքը տեսան մեր «ընկերները» — փակագծեալ բառը քեզի՝ օտարականիդ՝ մասնագիտական պիտի երեւի, մեկնութիւնը ուրիշ տեսնի: Չիտեմ թէ զրաւոր յիշատակներ թողա՞մ է: Վախնամ ոչ: Վախնամ թէ գոհ ըլլամ: «Չեր ազգին» «չահը կը սլահանջէ որ զրսէն ատ Վան մտնողներուն վըրայ շատ չիօտուի: Հայաստանի ատանկ բարեկամներ «չեմ մաղթեր», ըսած է մերիններուն: Իր յիշատակներուն մէջ անշուշտ աւելի ընդարձակօրէն պիտի զրէր ինչ որ խօսակցութեան ատեն սանկ քիչ մը յայտնած է: Ժամանակակից պատմութեան էն գեղեցիկ էջը չէ ատ ամէնը, եւ ո՛չ ալ փոքր ինչ գեղեցիկը:

Աւելի հետաքրքիր էի Վանայի իր հոգեկան տագնապներուն նկարագրութիւնը կարգալ իր գրչէն ելած: Չես զիտեր թէ ինչնր բերին խեղճին զլուսն. բայց երբ երեւակայես թէ ի նպաստ Հայոց 10,000 ոսկիի գումարի մը մատակարարութիւնը իրեն յանձնուած էր, մնացեալը ինքնիրենդ կրնաս գուշակել առանց սխալելու: Այդ բոլոր շարժարաններուն մէջ սակայն որոնք իր մահը գուցէ երագեցին, օրիորդ Ֆրէզըր իր գուարթութիւնը չկորսնցուց, վասն զի կորովը չէր տկարացած: Կոուող մըն էր, ու կոուողները իրենք կը փնտոեն ընդդիմադրութիւնը:

Ու մի՛ կարծեր ալ որ Վան ու Վանա տեսածները շատ վէշ տրամադրած ըլլան զինքը Հայոց համար: Իրաւ է որ տեսածները շատ յանձնարարելի գործեր չէին. բայց ինքն ալ զարգացած աղջիկ էր, ուստի զիտէր թէ մենէ անհունապէս զեր ի վերոյ ժողովուրդներու մէջ ալ բուռն ժամանակները — «Հայի Դիցազն»էն խրթին բառ մը փոխ կ'առնեմ որպէս զի չըլլայ թէ ճիշտ բացատրութեան գործածութեամբը անձնասիրութիւններ վիրաւորուին — երեւան կուգան գէմքեր որոնց գոյութիւնը ոչ ոք կասկածած էր, եւ որոնց ալ կարելի է ուղղել Պէտանթէի ուրիշներու հասցէին խրկած համբաւաւոր հարցապնդումը,

Ո՞ւսկից կ'եղէք, սե՛շ մարդիկ:

Ո՞ւսկից: Բայց բուռնութեան ժամանակի իմաստասիրութիւնը չէ որ պիտի ընեմ, որուն համար պէտք պիտի ըլլայ կենդանաբանական ուսումնասիրութեանց հետեւիլ. ապուաները ե՞րբ տեղ մը կը հաւաքուին, գայլերը ո՞ր տեսն լեռնէ վար կ'իջնեն: Ուրեմն ի՞նչ փնտոէ եւ գտիր

պատճառները այդ «ո՞ւսկից» են, ու ես քու լրջախոհութեանդ յանձնարարեմ կարծիք մը: Արդեօք լաւագոյն արդիւնքներ ձեռք չե՞նք բերեր եթէ մեր հանրային գոծերու ղեկավարութիւնը օտարներու յանձնենք, գոնէ առժամանակեայ կերպով, մինչեւ հաշուեյարգարութիւն: Անշուշտ պիտած ես թէ ոչ մէկ հայ գործող — եկուր բացառութիւն չընեմ որպէս զի ասոր անոր խաթրը չմնայ, — ընդունակ է մտքէն անցընելու թէ իր հանրային գործերուն մէջ յիմարութեան մը նշանները կ'երեւին, կամ աչքի շատ զարնող տգեղութիւն մը: Իրաւ է որ ամէն աշխարհի մէջ ալ քիչ մը աս ասունկ է, բայց մենք մերը նայինք: Կը նըմանինք մայրերու որոնց աչքին չի զարներ իրենց զաւկին տգեղութիւնը: Անշուշտ առանց պատրանքի մայր մը երջանիկ չի կրնար ըլլալ, եւ ոչ ալ մենք: Բայց երբ տգեղութիւնը մինչեւ գեղեցկութեան տեսիլքի մը փայլովը կը պճնազարգի, մայրը ծիծաղելի կը դառնայ, իսկ հանրային կեանքը վտանգին դուռն է: Ամէն մարդ իր գործին զաւակն է կ'ըսեն, ճշմարտութիւն անհատական կեանքի մէջ, ան ալ թերեւ. բայց հանրային կեանքի մէջ ամէն գործ զինքն ստեղծողին զաւակն է. աս ստոյգ է. ասկէ՛ մեր մայրական աչքին տեսակ մը տալընականուութիւնը որ դոյները իրարու կը շփոթէ, կարմիրը՝ սեւ, սեւը՝ կարմիր կը տեսնէ: Օտարականը այդ հիւանդութենէն պիտի չտոտապի: Օրիորդ Ֆրէզըր մը յստակ կը տեսնէ, վասն զի մայրական հիւանդութիւնը չունի:

Դուն գուցէ պիտի ժպտիս, ու մեր հանրային աչքին մթազնութեան պատճառները պիտի ուզես փնտոել ժառանգական եւ ստացական ախտերու մէջ: Քեզի կը թողում ուրեմն այդ հոգեբանական ախտազնութեան յոգնութիւնը, ու ձանձրոյթն ալ, եւ ես կը քաշուիմ:

ՄԵՆԱՌԸ

ԱՐՏԱՒՍՈՒՄ ՄԸ

Կ. Պոլսէն Թայմզին կը հեռագրեն թէ սուլթանը Ֆրանսական ղեսպան Պ. Գոնսթանի հաւանութիւնը առած է Ֆրանսայէն արտաքսել տալու համար հայօրագրող մը, Պ. Անմեղեան, «որուն կորովը եւ ճարպիկութիւնը, կ'ըսէ հեռագիրը, կը վրդովեն Երւսաղէմ»:

Պ. Անմեղեան որ լաւ ֆրանսերէն գիտէ եւ Պալիս Սքանպոչ ֆրանսերէն թերթին աշխատակիցն էր, երեք տարի է ի վեր Բարիզ կը գտնուի. հոն Մեշլերիի եւ Ֆրանսական թերթերու մէջ թիւրքիոյ բարեկարգութեանց զատը կը պաշտպանէ, եւ ծանր պայքար մը կը մղէ սուլթանի համարի դէմ: Խաղաղութեան Համաժողովին առթիւ Պ. Անմեղեան Լա Հէ գնաց ընկերակցութեամբ Երիտասարդ թիւրքերու պետ Րիզա պէյի, որուն ըրած մէկ բանախօսութեանը առթիւ, Ապտուլլահ փաշա մենամարտի

հրաւեր խրկեց Մեշիքի խմբագրին: Բիզա պէյ կուսակցական նկատումներով չուզեց մենամարտիլ սուլթանին ներկայացուցչին հետ. Պ. Անձեղեան ինք առաջ նետուեցաւ, ու թէև բանախօսութեան խմբագրութեանը չէր մասնակցած բայց պատասխանատուութիւնը իր վրայ կ'առնէր: Ապտուլլահ փաշա իր զիտաւորութենէն ետ կեցաւ:

Հայաստանի բարեկարգութեանց խնդրին առթիւ Պ. Անձեղեանի պաշտպանած գաղափարներուն համակարծիք չենք, բայց շատ ուրախ ենք Երևուրդի դէմ մղուած կռուին համար, որ ոճրագործին քունը կը խռովէ:

Պ. Անձեղեան առաջին Հայն է որուն Ֆրանսայէն արտաքսումին կը փափաքի սուլթան Համիտ: Քաղաքակիրթ աշխարհը աչքերը յառած է Բարիզի վրայ, ուր Ֆրանսայի պատուին համար մեծ վտանգ կայ: Հանրապետական ազատ Ֆրանսան Մեծ-Մարգասպանին տրամադրութեանը ներքեւ է թէ ոչ: Մաղթենք որ Հանութեայի ամօթալի վարչութեան օրերը չլիերակենդանանան մեր սիրած Ֆրանսային համար:

ԼԱՍՏՆԳԻՆ ՉԱՐԱՓՈՒՆԵԱԼ

ԵՐԿՈՒ ՅՈՒԼԵՐԸ ԵՒ ԳՈՐԾԸ

Կեցցէ Կրեաէն ազատ:

Արտասահմանի հայ մատուց

Կրեաէի յիսուն հազար իսլամները Հայաստան փոխադրել կը մտածուի:

Եշրոպուսիս մատուց

Պարզեց Կիրիացին զբրօշն ապստամբ,

Ազատուիլ արեամբ:

Վանցին քաշեց ախ:

« — Լալիս ես, սարսախս, »

Ժրնէկցին հարցուց:

« — Աղա՛, մինք հընուց

Փորձով չենք զիտեր,

Պատասխանեց ան, որ գեղ ու արտեր թիւրքն անուկ կուգայ ձեռքերէն Հայուն: Երբ հոգն իր կորզեն սրբապ, պուլկար կամ յոյն: Երկրէն վրոճնտուած անտուն մուսուլման Պիտի իրն ընէ Հայաստան լուման: Արիւնը պիտի վազէ Հայ սըրտէն Եթէ թիւրքերուն յազթէ կըրեաէն: »

Վախը չէր անմիտ.

Կիրիտէն Համիտ

Խալամ հինգ բիւր

Կը խրկէ Վան հիւր:

Սուլթանին լուծէն

Պըրժողին վըրէժ միշտ Հայէն լուծեն:

ԱՐՈՄ ՃԻՆ

ԱՍԻԱԿԱՆ ԹԻԻՐԳԻՈՅ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԸ

Ընդհանրապէս թիւրքիոյ եւ մասնաւորապէս փոքր-Ասիոյ յառաջդիմութեան էն գլխաւոր արդեւը՝ փոխադրութեան դիւրութիւններու բացարձակ պակասն է: Զարմանալու չէ թէ հանքային հարստութիւնները երեսի վրայ թողուած են, երբ մարդ նկատէ թէ շահագործման համար հարկ եղած մեքենաները եւ արտադրութիւնը հանածոն ձիով կամ ուղտով փոխադրելու է, կամ թէ գարին Տրապիզոնի կամ Սամսոնի մէջ երկրին ներսերէն հնգապատիկ աւելի սուղ է: Փոքր-Ասիա նաւարկելի դեռեր չունի, եւ ճամբաներու կամ երկաթուղիներու բացումէն կախուած է իր ապագան: Փոքր-Ասիոյ ճամբաները այսօր շատ նախնական վիճակի մէջ են: Եւրոպական իմաստով՝ ճամբայ չկայ, թէպէտ մարդ յաճախ կը հանդիպի մեծ ծախքով սխուած բայց կէս թողուած ուղիներու, — յիշատակ ձեռներեց վալիի մը որ գործին ձեռք զարկած է՝ իր վիլայէթին օգտին (կամ իր անձնական օգտին) համար, բոլոր բնակիչները տարահապարհակ աշխատութեան ենթարկած է, ու յետոյ, երբ իր կամ կապալառուներուն զեղծումները բոլոր տրամադրելի գումարը սպառած են, ելած գացած է կայսրութեան մէկ ուրիշ նահանգը « զարգացնելու »: Եոզնաններու եւ հեռագիրներու թուականէն առաջ, ճամբաներուն քիչ շատ հոգ կը տարուէր՝ ճամբորդող պաշտօնեաներուն եւ կ. Պալիս երթեւեկող սուրհանդակներուն համար: Բայց այսօր պատճառ մը չկայ — բացի հանրային օգտէն, որ նշանակութիւն չունի — անոնց հոգ տանելու:

Փոքր-Ասիոյ ճամբաներուն բարւոքումը հաւանական չէ որ շուտով տեղի ունենայ, քանի որ, իրաց արդի կացութեան մէջ, թիւրք կառավարութենէն կախում ունի ատիկա: Առ այժմ, երկրին զարգացումը կախում ունի երկաթուղիներուն տարածումէն, թէպէտ կարելի ալ է որ ապագային երկաթուղիի ընկերութիւնները երբեմն իրենց համար շահաւոր գտնեն ճիւղաւորման ճամբաներ շինել՝ դիւրացնելու համար առեւտուրը այն գաւառակներուն ուր երկաթուղիի ճիւղի մը շինութիւնը շահաւոր պիտի չըլլար:

Երկաթուղիներու շինութեան առաջին օրէն ի վեր, միշտ խնդիր եղած է — մասնաւորապէս Անգլիոյ մէջ — Փոքր-Ասիոյ մէջէն երկաթուղի մը շինել դէպի Արեւելք: Տարիներով, Սինա-Բունճապ-Տէլէի երկաթուղիին նախագահ Պ. Անարիու ջանահնար եղաւ անգլիական կառավարութիւնը եւ անգլիական հասարակութիւնը համոզելու որ աջակցին իր ծրագրին՝ Եփրատը կամ Տիգրիսը երկաթուղիով մը Միջերկրականի միացնելու: Բայց Սուէզի ջրանցքին շինութիւնը ատենուան մը համար մէկդի քնել տուաւ ցամաքային հազորդակցութեան զանազան ծրագիրները:

Թիւրքիոյ երկաթուղիներուն սկզբնաւորութեան թըւականն ալ նոր չէ: Իզմիր-Այստըն եւ Իզմիր-Գասապա երկաթուղիները 1866ին բացուեցան: Բայց շարժուելը շատ դանդաղ առաջ քաշեց: Վերջին մէկ քանի տարիներս է որ մեծ խնդրանք կայ երկիրը երկաթուղիներով ծածկելու եւ հաղորդակցութեան մեծ գիծը շինելու:

Անգլիացիներն էին որ երկաթուղին մացուցին Անատոլի մէջ: Առաջ բոլոր գծերը, բացի Մուտանիա-Պրուսա կարճ գծէն, Անգլիացիներուն ձեռքն էին, — Իզմիր-Այստըն, Իզմիր-Գասապա, Մէրսին-Ատանա, եւ Հայտար փաշա-Իզմիր (արդի Անատոլիի երկաթուղիին առաջին մասը): Այս ամէն գծերը, բացի Իզմիր-Այստընէն, ֆրանսական եւ գերմանական ընկերութեանց ձեռքն են այսօր: Սուրիոյ մէջ, Հայֆա-Դամասկոս-Հօրան երկաթուղին, որուն արտօնութիւնը 1890ին անգլիական սէնտիքայի մը տրուեցաւ, ծրագրի շրջանակին մէջ մնացած է, մինչդեռ ֆրանսական Պէյրութ-Դամասկոս գիծը շատ յաջող ձեռնարկ մըն է այսօր:

Ասիական Թիւրքիոյ երկաթուղիներուն ամբողջ երկայնութիւնն է 1540 մղոն, որ 2100 ի պիտի հասնի երբոր Անատոլիի երկաթուղիին Էնկիւրիւ-Կեսարիա եւ Պէյրութի երկաթուղիին Դամասկոս-Պիւնէ ճիգ ճիւղերը շինուին: Չանազան ընկերութիւններուն աւանդն մեծն է Անատոլիի երկաթուղին, որ գերմանական սէնտիքայի մը հսկողութեան ներքեւ կը գտնուի, ի զուտ ունենալով 8էօյ Պանքը: Գիծը կը մեկնի Հայտար փաշայէն Էսկիշէհիր, ու անկից Էնկիւրիւ, ընդամէնը 361 մղոն: Էսկիշէհիրէն գիծը կ'երթայ Քէօթահիոյ ճամբով Աֆիոն-Գարահիսար ու անկից Քոնիա, ընդամէնը 275 մղոն: Գիւսաուր գիծը աւարտեցաւ 1890ին, եւ վերջին ճիւղը, Աֆիոն-Գարահիսարէն Քոնիա, 1897ին: Սէնտիքային ամբողջ զբաղակցութիւնն է, պարտատուութիւնն ու արձեւութիւնն, իբր 9 միլիոն անգլ. սօկի: Թիւրք կառավարութիւնը մղոնին 660 սօկիի հասոյթ մը կ'երաշխաւորէ մինչեւ Իզմիր, 960 սօկի՝ Իզմիրէն մինչեւ Էնկիւրիւ, 945 սօկի՝ Քոնիայի ճիւղին վրայ, եւ 1145 սօկի՝ Էնկիւրիէն Կեսարիա առաջադրուած գծին վրայ: Իսկ եթէ հասոյթը յիշեալ գումարներէն աւելի ըլլայ, հարիւրին 25ը Թիւրք կառավարութեան պէտք է մնայ: Էնկիւրիի հասոյթը երաշխաւորութեան գումարը գոցելուն պէս, ընկերութիւնը պարտաւոր է գիծը շարունակել մինչեւ Կեսարիա, ու ամբողջ գծին հասոյթը երաշխաւորութեան գումարը գոցելուն պէս, գիծը պէտք է երկարի մինչեւ Տիարպէքիր եւ Պաղատաս:

Տարակոյս չկայ թէ երկաթուղին մեծապէս աւելցուցած է իր անցած տեղերուն ընդհանուր բարեկեցութիւնը: Հանրային Պարտքի Վարչութեան թողուած տասանորդները հարիւրին 70 յաւելում մը ունեցան երկաթուղիին շինութեան յաջորդող առաջին չորս տարիները: Բայց եւ մըտապէս գծին յաջողութիւնը դեռ տարակուսական է: Գլխաւոր գիծը վերջին երկու տարիները կրցաւ երաշխաւորութեան գումարը գոցել՝ հելլենական պատերազմին

հետեւանցով երթեզեկութեան յաւելման շնորհիւ. բայց Քոնիայի ճիւղին տուած արդիւնքները ողբալի են: Ասիական ընկերան է սակայն, քանի որ Էսկիշէհիրէն Քոնիա գիծ մը շինելու նպատակը ուրիշ բան չէր բայց եթէ փորձել Պոլիս քաշել ստեղծուող նահանգի մը որուն բնական նաւահանգիստը սակայն Իզմիրն է:

Իզմիր-Գասապա երկաթուղին, որ առաջ անգլիական էր եւ 1894 ին ֆրանսական ընկերութեան մը անցաւ, բացուած է 1866ին եւ մինչեւ Ալաշէհիր երկաթաճգուած՝ 1873ին: Ֆրանսական ընկերութիւնը երաշխաւորութեան մեծ գումար մը ապահովուց՝ իր գիծը Ուլաքի ճամբով մինչեւ Աֆիոն-Գարահիսար երկարելու համար, ու հակառակ ճարտարադիտական մեծամեծ գտնաւորութեանց որոնց բաղնեցաւ՝ Հերմոսի հովտէն Անատոլի լեռնազաշար կլլելու համար, գիծը բացուեցաւ եւ Իզմիր երկաթուղիով Կ. Պոլսոյ հետ հաղորդակցութեան մտաւ 1898 յունուարին: Գծին ամբողջ երկարութիւնն է 325 մղոն: Ընկերութիւնը՝ Իզմիր-Ալաշէհիր մասին ընդհանուր հասոյթին հարիւրին 50ը միայն կը ստանայ, բայց 92,400 սօկիի հասոյթ մը երաշխաւորուած է իրեն՝ նահանգին տասանորդի տուրքովը ապահովուած: Ալաշէհիր-Գարահիսար մասին համար կառավարութիւնը մղոնին 1196 սօկի երաշխաւորած է: Շատ յոյս չ'երեւնար որ այս երկրորդ մասը ինք իր ծախքը հանէ, որովհետեւ ըստիպուած է մրցիլ թէ՛ Անատոլիի եւ թէ՛ Այստընի երկաթուղիին հետ:

Փոքր-Ասիոյ երեք մեծ գծերուն էն բարգաւաճն է Այստընի երկաթուղին: Գիծը բացուեցաւ 1866 ին, եւ թէպէտ սկիզբները շատ յաջող չ'ընաց, բայց 1879էն ի վեր կանոնաւորապէս կը յառաջգիմէ, աստիճանաբար յառաջանալով Մէանգրի հովիտն ի վեր, ճիւղեր բանալով դէպի կողմնակի արգաւանդ հովիտները, եւ վերջապէս Տիւնէր հասնելով: Իր ամբողջ երկայնութիւնն է 321 մղոն: Գիծը ու եւ կերպով երաշխաւորուած չէ: Գծին վարչութիւնը սքանչելապէս լաւ է, եւ Իզմիրը ու ամբողջ Այստընի նահանգը հարստացնելու մեծապէս ծառայած է, առանց Թիւրք հարկատուին վրայ ու եւ բեռ ըլլալու: Գիծը միւս ընկերութեանց գծերէն շատ աւելի աղէկ շինուած է, եւ կառախմբերը՝ Պելիւրատէն անդին ամէնէն արագընթաց կառախմբերն են, մէջը աննելով նաեւ հոշակաւոր Օրիանդ-Էքսըրէսը, որ, գոնէ Պալքաններուն մէջ, աշխարհիս ամենէն գէշ զեւեղուած ու ամենէն դանդաղ գծերէն մէկուն վրայէն կ'ընթանայ: Եւ սակայն, ընկերութիւնը անգլիական ըլլալուն, շատ տարիներէ ի վեր սուլթանը բացարձակապէս կը մերժէ հարկ եղած արտօնութիւնը տալ՝ գծին երկարաճգմանը համար: Շատ ժամանակ առաջ, Այստընի ընկերութիւնը առաջարկեց գիծը դէպի Արեւելք երկարել մինչեւ Քոնիա, ինչպէս նաեւ դէպի հիւսիս ճիւղ մը շինել մինչեւ Աֆիոն-Գարահիսար եւ Քէօթահիա՝ Անատոլիի երկաթուղիին միանալու համար, առանց ու եւ երաշխաւորութիւն խնդրելու: Առաջարկը մերժուեցաւ, եւ արտօնութիւնը Անատոլիի երկաթուղիին տրուեցաւ՝ ծանր

երաշխատութեամբ մը:

Հետեւեալ ցանկը ցոյց կուտայ յիշեալ երեք գծերուն հասոյթներուն գումարը 1896ին, 97ին եւ 98ին.

	1896	1897	1898
	մղոն	ոսկի	
Անասուրու	636	205,695	426,040
Իզմիր-Փասապա	490	136,436	158,194
Այտըն	321	315,199	354,971
			334,304

Այս թուանշաններուն մասին հարկ է զիտել թէ Անասուրուի երկաթուղիին հասոյթներուն ահագին յաւելումը 1897-98ին՝ մեծ մասամբ հետեւանքն է հելլենական պատերազմին առթիւ զօրքերու եւ ուղղամթերքներու փոխադրութեան, որ իզմիրի երկու գծերուն հետ առնչութիւն չունէր: 1898ին, Անասուրուի երկաթուղիին թիւրք կառավարութեանէն 179,580 ոսկի նպաստ ստացաւ իբր երաշխատութեան գումար, մեծ մասամբ Քոնստանտինուպոլիսի ճիւղին համար. իսկ Իզմիր-Փասապայի ընկերութիւնն ալ Փարահիսարի ճիւղին համար 140,000 ոսկի:

Փոքր-Ասիոյ միւս երկաթուղիներն են՝ Մուսանիա-Պրուսայի զիծը 26 1/2 մղոն, որ Պրուսան Մարմարայի ծովուն կը միացնէ, ձիթենիի եւ թթենիի պարտէզներու մէջէ ընթանալով, եւ Մէրսին-Թարսուս-Ատանայի զիծը, 41 3/4 մղոն, կիլիկիան բերրի բայց վատաոզղ գաշտին մէջէն: Սուրիոյ մէջ կայ Պէյրութ-Գամասիոս-Հօրանի երկաթուղին, 140 մղոն, եւ Եաֆա-Երուսաղէմի զիծը, 32 մղոն:

Եւր գծերու համար խնդրանքները գրեթէ անհամար են, ասոնցմէ ամէնէն կարեւորները ըլլալով անոնք որոնք կ'առաջադրեն ճեպընթաց ուղի մը հաստատել մինչեւ Պարսկաստան եւ Հնդկաստան: Անասուրուի երկաթուղին կը յուսայ իբր զիծը երկարել Էնկիւրիւէն Կեսարիա, եւ անկից Տիարպէքիի եւ Մուսուլի ճամբով մինչեւ Պաղատա: Պաղատաէն, զիծը կրնայ իջնել մինչեւ Պարսից Ծոցը, եւ Պարսկաստանի ու Պելուճիստանի ծովեզերքը բերելով, կամ՝ աւելի հաւանօրէն՝ Պաղատաէն Թէհրան ուխտադրանացութեան եւ կարաւանի մեծ ճամբուն հետեւելով, Հընդկաստան հասնել՝ Իսպահանի եւ Եէզաի ճամբով: Ուրիշ ծրագիր մը կ'առաջադրէ Կեսարիայէն Պաղատա իջնել՝ Մարաշի, Այնթապի, Պիրէճիքի եւ անկից Եփրատի հովտին մէջէն Մուսուլի ճամբով: Այս զիծը, ըստ ծրագրին, Պիրէճիք պիտի հաղորդակցի Պէյրութի գծին, որ Հոմսի, Համայի եւ Հալէպի ճամբով մինչեւ Պիրէճիք երկարաձգուելու է՝ մղոնին 800 ոսկի երաշխատութեամբ: Ուրիշ ծրագիր մը կ'առաջարկէ Էսկիշէհիր-Քոնստանտինուպոլիսի զիծը Տարսուս լեռան վրայէն երկարել մինչեւ Ատանա, եւ անկից Մարաշի ճամբով մինչեւ Պիրէճիք: Օսկարական եւ ճարտարագիտական տեսակետով, առաջարկուած գծերուն ամէնէն գէշն է աս հաւանօրէն: Եփրատի հովտէն անցնող ճամբաներն ալ, որոնք Իսկէնտէրունէն կամ Լաթաքիայէն պիտի մեկնէին, անշուշտ այնքան գործ պիտի չկրնան ընել որ ծախքերնին հանեն, մանաւանդ որ թղթատարա-

կան պայուսակներուն համար Երուսալի եւ ծայրագոյն Արեւելքի միջեւ էն արագ ճամբան Կ. Պոլսոյ վրայով է, եւ ո՛չ Իսկէնտէրունի: Ասկից զատ, սուլթանին տեսակետով, Եփրատի հովտին մէջէն այդպիսի գծեր ո եւ է զինուորական արժէք չունին: Ապտիւ Համիտ բնականաբար Կեսարիա-Պաղատա ծրագրին կողմնակից է, եւ ի հարկին պիտի ուզէ որ ճիւղ մը շինուի մինչեւ Երզնկա, որ Արեւելեան Անասուրուի զինուորական մեծ կեդրոնն է, ու թեւեւ իսկ շարունակուի մինչեւ Էրզրում, որ ազգագրատական ուրիշ կարեւոր կէտ մըն է:

Բայց ընտրուած ճամբան ո՛րն ալ ըլլայ, պէտք է բանաւոր յոյս մը ըլլայ թէ ծախքերը պիտի հանէ, եւ այդպիսի յոյսի մը նշոյլը չկայ դեռ: Ժամանակին ընթացքով, թեւեւ, քաղաքական շարժառիթներ, նման անոնց որոնք Չինաստանի երկաթուղիներուն մասին համաձայնութիւն մը առաջ բերին պետութեանց միջեւ, մղեն Սինգլիան եւ Գերմանիան որ միաբանին եւ երկաթուղիի ծրագիր մը ի գործ գնեն՝ երկուքին միահաղոյն հսկողութեան ներքեւ: Այս մեծ ձեռնարկին մէջ, Արեւմտեան կամ Անասուրուի մասը բնականաբար Գերմանիոյ բաժին պիտի ինչայ, մինչդեռ Միջագետքի կամ Պարսկաստանի ճիւղերը՝ Անգլիոյ պիտի մնան, որուն զինուորական եւ նաւային խաբիսը Հնդկաստանի եւ Պարսից Ծոցին մէջ կը գտնուի: Բայց ասիկա բոլորովն նոր էջի մը բացումը պիտի ըլլայ Արեւմտեան Ասիոյ մէջ:

«ԷՏԻՄՊՈՒՐԿ ԲԻՎԻՈՒ»

ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԸ ԵՒ ՊԱԼԱՏԸ

Կ. Պոլիս 10 22 յուլիս 99.

Պատրիարքարանի պահանջումներուն մասին այլ եւս Պալատին հետ բանակցութիւններ չեն կատարուիր: Յուլիս 11ին պատրիարք եւ Արթին փաշա պալատ հրաւիրուելով տեղեկութիւն ստացան թէ կայսերական իրատէ մը պիտի հրամայէ զոհացում տալ պատրիարքարանին կողմէն ներկայացուած խնդրանքներուն: Երբազրի պալատը փութալանութիւն ցոյց տուաւ այսպիսի զեկուցում մը ընելու, որպէս զի պատրիարքարանէն կառավարութեան չյանձնուի պատրաստուած թագրի մը, որ ինչքան ալ չափաւոր ոճով գրուած ըլլար բայց եւ այնպէս պաշտօնական բողոք մը պիտի նկատուէր: Կը պատմուի թէ Կեղրոնական վարչութեան բոլոր անդամները ստորագրած են այդ պահանջագրին ներքեւ: Այս ձեւակերպութիւնը հակառակ է ընդունուած սովորութեան, որուն համեմատ պատրիարքը կը կնքէ թագրի մը:

Մատուցուելիք թագրի մէջ պատրիարքարանը կը գանդատէր թէ Սիսի կաթողիկոսին ընտրութեան հրաման չի տրուիր. թէ կայսրութեան մէջ ճամբորդել փափաքող Հայոց առջև անյաղթելի դուարութիւններ կը յարուցուին, թէ երկրին ներսերը ծայրայեղ խստութիւններ կը գործա-

յրուին, հալածանք եւ հարստահարութիւն անդադրում առաջ կը տարուին, թէ Հայոց կ'արդիւնի կործանած եւ կեղեցիները, դպրոցները, վանքերը վերանորոգել կամ նորերը շինել: Վերջապէս թագրիրը կը խնդրէր պետական օգնութիւն տառապող հայ զեղացիներուն համար, և քաղաքական բանտարկեալներու ազատութիւն:

Հաւանական չէ որ այս պահանջումներուն ամբողջութիւնը ընդունուի, իսկ եթէ պզտիկ գոհացում մըն ալ տրուի, շատ աննշան բան պիտի ըլլայ: Մինչ մէկ կողմէն պատրիարքարանին հաղորդուեցաւ թէ շուտով կայսերական իրատէ մը պիտի հրամայէ պատրիարքարանին խնդրանքներուն գոհացում տալ. միւս կողմէն սուլթանը հրամայեց նախարարներու խորհրդին հետեւեալ երեք կէտերուն կարգադրութեան եղանակին վրայ խորհիլ.

1. Սիսի կաթողիկոսին ընտրութիւնը.

2. Խառն Յանձնաժողովի մը ընտրութիւնը, պատրաստելու համար վէճի առարկայ եղող սեփականութեանց ցուցակը:

3. Մասնակի ժողացում:

Մասնակի ժողացումը — ամենաքի — կամ ինչպէս սովորութիւն է ըսել ներօգութիւն, ո՛ր եւ է նշանակութիւն չունենար. զուր տեղը, զիպուածով կամ թշնամութեամբ բանտարկուած քանի մը խեղճերն են որ պիտի ազատուին, իսկ անոնք որոնց վրայ ազգը կը գուրդուրայ իրենց կրած տառապանքներուն և զոհողութեանցը համար անոնք պիտի շարունակեն փտտիլ բանտերուն մէջ: Իսկ ինչ որ «վէճի առարկայ սեփականութիւն» կը կոչեն ուրիշ բան չէ բայց եթէ թիւրքերուն եւ քիւրտերուն Հայոց ձեռքէն խլած հողերը, տուները: Դժուար է թէ ատոնք ետ դարձուին: Շանը բերնէն ոսկոր չ'անուիր, մանաւանդ երբ դատաւորը շանը պահապանն է:

Միակ խնդիրը որուն կարգադրութեանը հաւանակաւ նուրթիւն կայ, Սիսի կաթողիկոսին ընտրութեան գործն է, եւ ան ալ առանց երբեք ազգին գոհացում պատճառելու բնոյթն ունենալու: Օրէ օր կը սպասուի որ Կիլիկիոյ կաթողիկոսին ընտրութեան հրահանգն ու հրամանը պարունակող թէղքերէն ելլայ: Պարունակութիւնը հիմաւուց կարելի չէ գիտնալ, բայց առանց շատ սխալելու հաւանակաւ նուրթեան կրնայ զուշակուիլ թէ ազգին աւանդութեանց ու շահերուն բոլորովին հակառակ հրամաններ պիտի պարունակէ:

Կառավարութիւնը շատ մը մեքենայութիւններ կը գործէ Կիլիկիոյ կաթողիկոսական խնդրին առթիւ, ինչ որ անգամ մը եւս կը հաստատէ այդ Աթոռին ընծայուած կարեւորութիւնը: Կիլիկիոյ ժողովրդին բռնի հանրազրութիւններ ստորագրել կը տրուին, ներքին գործոց նախարարութեան ուղղեալ, որոնցմով ժողովուրդը իբր թէ կը բողոքէ երկար ատենէ ի վեր անհովիւ մնացած ըլլալուն համար եւ կը խնդրէ որ Կիլիկիոյ կաթողիկոս նշանակուի Էտիրնէի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Սուքիասեան: Ահա ուրեմն կառավարական ընտրելին Կիլիկիոյ աթոռին համար: Մեսրոպ եպիսկոպոսին անունը, գոնէ արտասահ-

ման, յաճախ չէ լսուած, վասն զի պատրիարքական ընտրելի չէ ներկայացած լրջօրէն. բայց համբար շատ տըխուր է. ներքին գործերու նախարարին զլխաւոր լրահանքն է: Կաթողիկոսական այդ ընտրելին ամբողջ կառավարական յայտագիր մըն է: Ի նպաստ Մեսրոպ եպիսկոպոսի հանրագիրը որ Պոլիս խմբագրուած Կիլիկիա խրկուած է, ընդհանրապէս սպաննալիքներու, բռնարարութեան ներքեւ ստորագրել կը տրուի ժողովրդին, եւ ի հարկին խոստումներով ալ:

Ատանայի նահանգը մասնաւորապէս կը տառապի, նմանապէս եւ Տիգրանակերտ: Հայկական բոլորնահանգներուն մէջ այս երկուքը վանի եւ Բաղէշի հետ միասին բացառիկ կերպով հալածանքներու ենթարկուած են: Պատրիարքարան եկած տեղեկագիրները սոսկալի կերպով սրտածմլիկ են: Կառավարութիւնը եւ թիւրք խուժանը միացած կը հարստահարեն հայ ժողովուրդը: Տեղի ունեցող ամենօրեայ մասնակի զէպքեր ժողովուրդը շարժելու բացարձակ նշան կրնան նկատուիլ:

Այս բոլոր խոտացեալ բարեքներուն փոխարէն սուլթանը կը պահանջէ որ վերաքննեալ Սահմանադրութիւնը շուտով պալատ խրկուի առ ի վաւերացումն: Վերաքննեալին ծրագիրը շատոնց է պատրաստ է, ու քսանեւէ կնիք օրինակ բաժնուած է Խառն ժողովին անդամներուն, սակայն վերջնական որոշումը տալով ծրագիրը Երլտըզ յանձնելու համաձայնութիւնը կը պակտի: Խառն ժողովին փոքրամասնութեան ստիպումովը վերաքննեալ Սահմանադրութեան ողին անփոփոխ պահուած է, միայն երկրորդական փոփոխութիւններ եղած են. օրինակի համար աշխարհական երեսփոխաններու թիւը 120ի տեղ 60ի զեղչուած է, եւն: Արդ սուլթանը կ'ուզէ բոլորովին ջնջել ազգին իրաւունքները, ու Պատրիարքարանը պարզապէս Դրան մէկ պաշտօնատանը վերածել: Բնական է որ խրկուած ծրագիրը իրեն հաճելի պիտի չըլլայ. բայց անգամ մը որ պատրիարքարանէն ներկայացուած ծրագիր մը իր ձեռքն ըլլայ, սուլթանը այլ եւս զաղարած պիտի հրամայէ հինը, և նորին գործադրութիւնը օրինաւոր պիտի համարի, բայց այդ նորին մէջ ուզած փոփոխութիւնները ընելու պայմանաւ: Հինը զաղարած, նորը Երլտըզէն Երբ պիտի զարձուի պատրիարքարան:

...Բայց այս անձաւն
Թէեւ կը տեսնեմ ինչպէս կը մտնեն
Սակայն չեմ տեսներ ինչպէս գուրս կ'եւլեն:

Այս վտանգները տեսնելով Խառն ժողովին փոքրամասնութիւնը չ'ուզեր որ նոր ծրագիրը շուտ պալատ խրկուի, իսկ Օրմանեան եւ Տատեան վարանոտ վիճակի մէջ են. զիտեն թէ ինչ փորձանք պիտի գայ Սահմանադրութեան զլխուն, և մինչեւ որ ինքզինքնին կատարելապէս ապահով չզգան պիտի զժկամակին այդ վտանգաւոր քայլը առնել:

* *

Վերջին խոշոր լուրը: Օրմանեան պատրիարք գիւ-
կան խորհուրդ մը յղացած է որուն իրականացումին կը
քործակցին Տատեան Արթին փաշա եւ Երլտըզը: Ահա
իրողութիւնը: Պատրիարքը զգալով թէ Լա Հէյի Համա-
ժողովին զարկած հեռագրովը մեծ սխալ մը գործեց եւ մա-
հացու հարուածը տուաւ իր ճարպիկութեան համբաւին,
շուարած մնացած էր: Հանրութեան խուլ մտունչը, արտա-
սահմանեան մամուլին զազրացկոտ աղաղակը որ ժողո-
վըրդական խաւերուն խորը արձագանգ գտաւ, վրդովեցին
պատրիարքարանին հանդատութիւնը: Եւ ահա բարկու-
թեան դէմ կուրծք տալու համար պատրիարքը մտաբե-
րեց իրեն վահան ընել Կ. Պոլսոյ եւ Պուլկարիոյ կարգ մը
ծանօթ Հայերու գլուխները: Ասոնք իրենց ընտանեկան
կացութեամբը, առեւտրական զիրքովը շուտով տեղի կու-
տան ճնշումներու, սպառնալիքներու առջեւ: Օգտուելով
առեւտրական այդ դասակարգին տկարութենէն, Օրման-
եան թէ՛ Պոլիս, եւ թէ՛ Պուլկարիա՝ ուր Պոլսոյ հետ անդա-
պար գործ ունեցող թրքահպատակ Հայեր կան, հանրա-
զիր մը ստորագրել պիտի տայ: Առեւտրական դասակար-
ըը առով պիտի յայտարարէ թէ արդարեւ շատ ապօրի-
նաւոր էր Լա Հէյի Համաժողովին եղած դիմումը, թէ
«պատրիարքը ազգին միակ օրինաւոր ներկայացուցիչն է
եւ ինքն է միայն որ պաշտօն ունի ազգին ինդրանքները
սուլթանին հայրական հոգածութեանը ներկայացնելու:»
Ժողովրդէն խլած այս զէնքը իր ձեռքն ունենալով Օրման-
եան կը կարծէ թէ պիտի կարենայ յաղթանակաւ յայ-
տարարել ամբողջ ազգին որ ինքն ուրիշ բան չէ ըրած
Լա Հէյ զարկած հեռագրովը բայց եթէ ազգին «խելքը
զուլտը» դասակարգին գաղափարներուն թարգմանը հան-
դիսանալ:

Դժբաղդաբար՝ Օրմանեանին համար՝ այս մեքենայու-
թիւնը շուտով իմացուեցաւ եւ իր արդիւնքը հիմակուց կը
զեղչուի:

— Պատրիարքը վերջերս սպառնական նամակ մը ըս-
տացաւ. սահմակած մնաց: Իր շուրջը գտնուողներուն ցոյց
տալ չուզեց: Նամակը ատեն մը քովը պահելէն յետոյ
օրին մէկն ալ առաւ Երլտըզ տարաւ եւ թահափն պէյին
յանձնեց: Սուլթանին քարտուղարը պատասխանեց թէ
շատ ուշ կը բերէր. իրենք արդէն այդ նամակին մասին
շատոնց է վառնայէն լուր առեր են:

Մուշի դէպքերուն առթիւ Երլտըզը խնդրեց Անգլիոյ
դեսպանէն որ տարածուած լուրերը հերքելու կամ չափա-
ւորելու նպատակ: Դեսպանատունը հաճոյակատար գտնը-
ւեցաւ. ազիկ՝ անգլիական լրագիրներէ ոմանց այն տեղե-
կութիւնները թէ Մուշի դէպքերը չափազանցուած հրատա-
րակուեր են: Կ'ըսուի թէ Անգլիոյ դեսպանը պաշտօն ալ
տեղեկագիր մը տուեր է թէ իրեն հասած լուրերուն նայե-
լով Մուշ կամ շրջակաները մեծ բան մը չէ որ պատա-
հեր է:

ԺԱՄԱՆՅ

ՕՐՄԱՆԵԱՆԻ ԵՐԿԸ

Կաթողիկոսն այն օրից
Երբ հաճեցաւ զիս օծել
Եւ իբրեւ մի նոր փորձանք
Եպիսկոպոս ձեռնադրել,
Ես մեծաշունչ խնդուքով
Երկու ձեռքս պարզեցի
Եւ իմ գորեղ թեւերով
Սուլթան Համիան գրկեցի:

Մինչ տարիներ շարունակ
Արմաշի մէջ բանաւած
Լալիս էի անդապար
Ազգիս քունը խանգարած,
Խնդրում էի նրբանից
Ինձ պատրիարք անուանել.
Ես այն օրից ուխտեցի
Սուլթան Համիար սիրել:

Երբ Սուլթանին ֆերմանով
Պոլսոյ գահը բազմեցայ,
Պախշիշներու խըրտոցէն
Սիրտս ու հոգիս բերկրեցան.
Նախկին խօսքն որ ասացի
Չեղաւ ազգ մազգ կամ այլ ինչ.
«Կեցցէ՛ Սուլթան» զուրս թրուաւ
Իմ աննական կոկորդից:

«Կեցցէ՛ Սուլթան» ինձ կրկնեց
Չայն մ'անորոշ, ահալից.
«Դու Սուլթանին անձնատուր
Կամիս լինիլ այս օրից.
Ո՛հ փըշոտ է ճանապարհչոյ,
Տես Աշըպեանն ի՞նչ կ'ըսէ.
Ազգն Համիաի զոհողին
Գնտակ՝ դաշոյն պակաս չէ:»

«Կեցցէ՛ Սուլթան» գոչեցի,
«Թող որոտայ իմ գլխին
Գնտակ, դաշոյն, հըրացան
Թո՛ղ արդ ըլլան ինձ բաժին.
Ես մինչեւ ի գուռ մահուան
Մինչեւ Շիշլի գերեզման,
Պիտի գոռամ պիտի կրկնեմ,
Անդապար «Կեցցէ՛ Սուլթան:»

ՎԱՀՐԱՄ

ԼՈՒՐԵՐ

Բարիզի «Բըդի-Պիո» լրագրին Վիեննայի բոլորակիցը հետեւեալ ցնցողական լուրը կը հեռագրէ.

«Սոչրանը շատ վրդովուած է այն լուրին, որ Բեդր-պոչի ստեղծուած է, թէ Չարը մտադիր է Պետոսքեանց նոր Հանածոյով մը գոշմարել՝ խորհրդակցելոչ համար բոլոր պաշխանեան խնդիրներուն եւ մասնաւորապէս Թիւրքիոյ Հայոց ու Մակեդոնացոց կացութեան վրայ: Կ'ըսուի թէ սոչրանը ամեն ձեզ պիտի բախէ Վիեննայի եւ Պերլիի արքունիքներուն մէջ՝ Չարին դիտաւորաբար իրականացմանը առաջը առնելոչ համար, եւ վստահօրէն կ'ապաշիւի Գերմանիոյ կայսեր աջակցութեանը:»

Այս լուրը դժբաղդարար արձագանգ չգտաւ եւրոպական աւելի կարեւոր լրագրիներոչ մէջ:

—Քաղաքական շրջանակներոչ մէջ մեծ կարեւորութիւն կ'ընծայուի այն ոչդեռութեան գործընթակի արտաքին գործերոչ նախարար Պ. Տէլքասէ այս միջոցին կը կատարէ Բեդրպոչի: «Տէլքի Նիւոզ»-ի Բարիզի բրդակիցը կը կարծէ թէ, այն զանազան խորհրդակցութեանց մէջ գիր Պ. Տէլքասէ պիտի ոչնեւնայ առաւելաւորութեան հետ, ասիական խնդիրները իրենց բաժինը պիտի ոչնեւնան: Ասիական ըսելով, «Տէլքի Նիւոզ» անընդուն կ'ակնարկէ հայկական ալ: Պ. Տէլքասէ խորհուրդ միշտ կը վերագրուի Թիւրքիոյ մէջ աւելի գործօն քաղաքականութեան ձեւարկել, եւ այս մասին Ռուսիոյ հետ համաձայնութեան մը գալ՝ Թիւրքիոյ քրիստոնեայ հասարակութեանց վրայ Թրանսայի ոչնեցած պատմական պաշտպանութիւնը աւելի ազդուօրէն ի գործ դնել կարեւարութեանը: Չենք գիտեր սակայն թէ Պ. Տէլքասէ ոչդեռութիւնը ու եւ ի արդիւնք պիտի ոչնեւնայ յիշեալ ոչդեռութեանը:

—Կ. Պոլսոյ առաւելաւորութեան յոյսն 29-ին ծանուցագիր մը ներկայացնելով Դրան, կը գանգատի թէ իր սահմանագիծին վրայ արշաւանքները՝ առարաւորութիւնները, արջաթի գողութիւնները անպակաս են, որոնց յաճախ կը մասնակցի Համիտի հեծելազօրքը: Երանուցագիրը խիստ շեշտով մը կը պահանջէ վերջ մը դնել այս կացութեան:

—Կ. Պոլսոյ առեւտրական եւ սեղանաւորական շրջանակներոչ մէջ դժգոհութիւն կը տիրէ որ Քիւրտերը անցան հայ բեռնակիրներոչ, դանակներոչ, օտապաշիւններոչ եւ պահապաններոչ տեղ: Ո՛չ միայն ամեն ինչ խանգարուած է գործերոչ կանոնաւորութեան մէջ, այլ պահապանները առաջին գողերն են: Տանձին պահապանութիւնը արջին են յանձնել: Թե՛ պատրիարքարանի միջոցաւ, եւ թէ անհատներոչ կողմէ դիմումներ կ'ըջան կառավարութեան որ Հայաստանցի պակտիստներուն նորին բոյլ-

տոնութիւն ըլլայ գալ Պոլսոյ եւ գործ ոչնեւնայ: Սակայն սոչրանը չուզեր մտիկ ընել ասանկ առաջարկ մը:

—Անգլիական եւ գերմանական շահերը իրարոչ հետ կը մրցին Պոլսոյ Պաղատի գծին շինութեան շուրջը: «Թայմզ»-ի հեռագիր մը կ'ըսէ թէ Գերմանացիները կ'ոչնեւն որ սոչրանին մէկ իրատեւ անմիջապէս սկզբնեցով իրենց տայ այդ գծին շինութեան մեկնաւորութիւնը, ապագային վերապանելով մանրամասնութեանց կարգադրութիւնը: Սա՛յն պաշտօնի խնդիրին պատկանող քանի մը հոգիներէ կատ Թիւրքերոչ անեւարարք դիրք ոչնեցող բոլոր անձնաւորութիւնները կը հակառակին Գերմանացիներոչ տրուելիք մեկնաւորութիւն դեմ, եւ կ'ընդունին անգլիական ծրագիրը: Սոչրանը թէ՛ կը փափաքի Վիլհելմ կայսեր անհաճոյ գործ մը չընել, եւ թէ չուզեր բշխանել իրեն գործը նպատակները, ոչնեւն փափուի կացութեան մը մէջ կը գտնուի:

—Անատոլիոյ գեղացիները այնքան գեշ ընդունելութիւն մը կ'ընեն կրեմեկ գացող խալալ գաղթականներուն, որ թիւրք կառավարութիւնը հրահանգ տուեր է որ այս սոչնեւնեւ այդ գաղթականները Սոչրիս եւ Տրիպոլիս դըրկուի:

Միշտ կողմէ սակայն, Սոչրիոյ քրիստոնեայ բնակիչները մեծապէս զայրացած են այս տեղիւնութեան: Օտարանպատակները բողոքագրեր պատրաստելոչ վրայ են, գործը իրենց հիշատակներուն միջոցաւ իրենց կառավարութեանց պիտի դրկեն:

—Տիրահոշակ քիւրտ Հիւսէյին փաշա, որ գերմանացի հեռագիտ Բրոնֆ. Պիլլի վրայ կատարուած յարձակման թելադրիչ է, անպարտ արձակուել է Վանի դատարանէն:

—Սոչրանը Երլարդի դարաստանին մէջ իր ալքին առջեւ կայսեր տուած Երիֆիտտին աղա անունով սեռաւորքները կը լուրջ մը:

ՀԱՍՏԷ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին դրկել առ

I. FRANK,
32, CHESTERTON ROAD,
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15-ին: Բաժնեգինն է Երրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 եւ վեցամսեայ 1 տոլար: